

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ФИЛОЛОГИЯ
JOURNAL OF YEREVAN UNIVERSITY
PHILOLOGY

№ 3(48)
2025

«Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի

Журнал «Вестник Ереванского университета. Филология» выходит три раза в год. Издаётся с 2010 года.

Правопреемник издававшегося в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета"

Three issues of "Journal of Yerevan University. Philology" are published annually. The journal has been published since 2010. It is the successor of "Journal of Yerevan University" published in 1967-2009

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ – РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ – EDITORIAL BOARD

Գլխավոր խմբագիր՝

Главный редактор:

Editor-in-chief:

Ավետիսյան Լևոն (բ.գ.թ., դոց.,
l.avetisyan@ysu.am)

Аветисян Левон (к.фил.н., доц.)

Avetisyan Levon (Ph.D. in Philology,
Associate Professor)

Ավետիսյան Ծուրի (բ.գ.թ., պրոֆ.,
yuriavetisyan@ysu.am)

Аветисян Юрий (д.фил.н., проф.)

Avetisyan Yuri (Sc.D. in Philology,
Professor)

Գասպարյան Սեդա (բ.գ.թ., պրոֆ., ԳԱԱ
թղթակից անդամ, *sedagasparyan@ysu.am*)

Гаспарян Седда (д.фил.н., проф., член.кор.
НАН РА)

Gasparyan Seda (Sc.D. in Philology,
Professor, NAS RA Corresponding Member)

Զեքիան Պողոս-Լևոն (պ.գ.թ., ԳԱԱ
սրտաստիսիանյան թղթակից
անդամ, պրոֆ., *zkybhs@gmail.com*)

Зекьян Погос-Левон (д.ист.н., иностран-
ный член НАН РА, проф., Италия)

Zekiyan Poghos-Levon (Sc.D. in History,
NAS RA Foreign member, Professor, Italy)

Վատվաթյան Վիկտոր (բ.գ.թ., պրոֆ.,
viktorkatvalyan@mail.ru)

Катвалян Виктор (д.фил.н., проф.)

Katvalyan Victor (Sc.D. in Philology,
Professor)

Շախաթեան Շուշան (բ.գ.թ., ԱՄՆ,
shushankarapetian@gmail.com)

Карапетян Шушан (к.фил.н., США)

Karapetyan Shushan (Ph.D. in Philology, USA)

Մարթեոսյան Վարդան (պ.գ.թ., ԱՄՆ,
varny1@yahoo.com)

Маттеосян Вардан (к.ист.н., США)

Matteosyan Vardan (Ph.D. in History, USA)

Մարտիրոսյան Հրաչ (բ.գ.թ., Նիդերլանդ-
ներ, *hrchmartirosyan@gmail.com*)

Мартиросян Грач (к.фил.н., Нидерланды)

Martirosyan Hrach (Ph.D. in Philology,
Netherlands)

Չոլաթյան Հակոբ (պ.գ.թ., Միդիս,
hagopcholakian@hotmail.com)

Чолакян Агоп (д.ист.н., Сирия)

Cholakyan Hakob (Sc.D. in History, Syria)

Պետրոսյան Դավիթ (բ.գ.թ., պրոֆ.,
davidpetrosyan@ysu.am)

Петросян Давид (д.фил.н., проф.)

Petrosyan David (Sc.D. in Philology,
Professor)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

LITERARY CRITICISM

- Ավ. Բաախակյանի ծննդյան 150-ամյակին –
Ժենյա Քալանթարյան – Ավետիք Բաախակյանը և արևելյան մշակույթը.. 6
– К 150-летию со дня рождения Ав. Исаакяна –
Женя Калантарян – Аветик Исаакян и восточная культура
– On the 150th anniversary of Av. Isahakyan's birth –
Zhenya Kalantaryan – Avetik Isahakyan and Oriental Culture
- Եվա Մնացականյան** – Կոմիտասն իր նամակների հայելիում..... 21
Ева Мнацаканян – Комитас в зеркале своих писем
Yeva Mnatsakanyan – Komitas in the Mirror of His Letters
- Նատալիյա Գոնչար-Խանջյան** – Նեոմիֆ և ապամոնոտաժում. կուռ-տուռազ նարատիվը և դրա վերափոխումը Ջոն Ափդայքի «Բրազիլիա» վեպում (անգլ.)..... 35
Наталия Гончар-Ханджян – Неомиф и деконструкция: куртуазный нарратив и его трансформация в «Бразилии» Джона Апдайка (на англ.)
Natalia Gonchar-Khanjyan – Neomyth and Deconstruction: the Courtly Narrative and its Transformation in John Updike's «Brazil»

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ЯЗЫКОЗНАНИЕ

LINGUISTICS

- Յուրի Ավետիսյան** – Լեզվական կադապար. հաղորդող և ներգործող լեզվատարրերի համատեղ գործածությունը ՋՀՄ լեզվում..... 48
Юрий Аветисян – Языковой шаблон: совместное функционирование передающих и воздействующих языковых элементов в языке СМК
Yuri Avetisyan – Language Template: the Joint Functioning of Transmitting and Influencing Language Elements in Mass Media Language

Մեղա Փասպարյան, Նելլի Մարգարյան – Հեղինակի մտադրությունը և ընթերցողի մեկնաբանությունը. ինտեգրացված մեթոդաբանական մոտեցում (անգլ.)..... 63

Седя Гаспарян, Нелли Саргсян – Интенция автора и интерпретация читателя с интегративно-методологической перспективы (на англ.)

Seda Gasparyan, Nelli Sargsyan – Writer’s Intention and Reader’s Interpretation from an Integrative-Methodological Standpoint

Մանուկ Ֆելեքյան – Բառերի պատճառաբանվածության մթագնումը հայերենում..... 77

Манук Фелекян – Затемнение мотивированного значения слов в армянском языке

Manuk Felekyan – Demotivational Meaning of Words in the Armenian Language

Աննա Աբաջյան – Դերանվան արրահամայնական ըմբռնումը..... 88

Анна Абаджян – Абраамяновское понятие местоимения

Anna Abajyan – Abrahamyan’s Approach to Pronouns

Անահիտ Աղիլխանյան, Զարիկ Աղաջանյան – Էկոլեզվաբանական հոգուերը Հայաստանի Հանրապետության լեզվամիջավայրում..... 101

Анаит Адилханян, Зарик Агаджанян – Эколингвистические проблемы в языковой среде Республики Армения

Anahit Adilkhanyan, Zarik Aghajanyan – Ecolinguistic Spirits in the Language Environment of the Republic of Armenia

Լուսինե Ղամոյան – «Պար» հասկացությունը և նրա բառակազմական առանձնահատկությունները գրական հայերենում..... 119

Лусине Гамоян – Понятие “танец” и его словообразовательные особенности в литературном армянском языке

Lusine Ghamoyan – The Concept of “Dance” and Its Word-forming Features in Literary Armenian Language

Անուշ Այունց – Պատկերավոր արտահայտչամիջոցները որպես գու-
գադրական ուսումնասիրության առարկա (Լ. Դարրելի «Բալթազար»
ստեղծագործության անգլերեն բնօրինակի և դրա ֆրանսերեն թարգմա-
նության հիման վրա) (անգլ.)..... 128

Ануш Аюнци – Образные средства выражения как предмет сравнительного
изучения (на материале английского оригинала произведения Л. Даррелла
«Бальтазар» и его французского перевода (на англ.)

Anoush Ayunts – Figurative Expressive Means as a Subject of Comparative
Study (Based on L. Durrell’s “Balthazar” and Its French Translation)

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ИНОСТРАННАЯ ЛИТЕРАТУРА

FOREIGN LITERATURE

Գայանե Մուրադյան, Ջարուհի Անտոնյան – Հեղինակ և երկի մեկնա-
բանություն. Ֆ. Սքոթ Ֆիցջերալդը և «Մեծն Գեթսբին» (անգլ.) 136

Гаяне Мурадян, Заруи Антонян – Автор и интерпретация текста: Ф.
Скотт Фицджеральд и «Великий Гэтсби» (на англ.)

Gaiane Muradian, Zaruhi Antonyan – Author and Text Interpretation: F.
Scott Fitzgerald and «The Great Gatsby»

Նաիրա Ավագյան, Բուա Զակալաշվիլի – Արտուրդի հասկացությունը
Ալբեր Կամյուի «Միգիֆոսի առասպելը» ստեղծագործության մեջ
(անգլ.) 143

Наира Авагян, Ита Закалашвили – Понятие абсурда в романе Альбера
Камю «Миф о Сизифе» (на англ.)

Naira Avagyan, Ita Zakalashvili – The Notion of Absurdity in Albert
Camus’s «The Myth of Sisyphus»

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

КНИЖНОЕ ОБОЗРЕНИЕ

BOOK REVIEW

Ալբերտ Մակարյան – Նաիրա Համբարձումյան, Էլպիս Կեսարացյան.
Էսսեներ, բանաստեղծություններ, նամակներ..... 155

Альберт Макарян – Наира Амбарцумян, Элпис Кесарациян: Эссе, стихи,
письма

Albert Makaryan – Naira Hambardzumyan, Elpis Kesaratsyan: Essays, Poems,
Letters

Ավ. Իսահակյանի ծննդյան 150-ամյակին

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

ԺԵՆՅԱ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ 
Երևանի պետական համալսարան

Հոգվածում ներկայացվում են Արևելքի մշակույթի հանդեպ Իսահակյանի մեծ հետաքրքրությունն ու առնչությունները: Մի կողմից՝ մանկուց ստացած ռոմանտիկ տպավորությունները, մյուս կողմից՝ Եվրոպայում գտնված տարիներին եվրոպական փիլիսոփաների (Նիցշե, Շոպենհաուեր, Կանտ և ուրիշներ) ու գրողների (Գյոթե, Բերանոսե, Դյումա...) կողմից Արևելքի ժողովուրդների բանահյուսության նկատմամբ ունեցած ոգևորությունը Իսահակյանին մղում են արևելյան բանահյուսության մշակմանը: Սակայն Արևելքը ընդհանրական հասկացություն է, որն ամփոփում է տարբեր ազգերի ու ժողովուրդների (հնդկական, չինական, պարսկական, ճապոնական, եգիպտական, հրեական...) ազգային խառնվածքը, լեզուն, կրոնը, փիլիսոփայությունը: Այս ժողովուրդներին պատկանող առասպելներում, ավանդություններում, զրույցներում Իսահակյանը շեշտադրում է յուրաքանչյուր ժողովրդի կենսահայեցողությունը, բարքերն ու սովորությունները: Իսահակյանին հաջողվում է շեշտել առանձին ժողովուրդների մտածողությունն ու վարքագիծը և տեսանելի դարձնել հին աշխարհից եկող իմաստուն գաղափարների հարստ և նշանակությունը:

Բանալի բառեր – *մշակույթ, բանահյուսություն, փիլիսոփայություն, կրոն, լեզուն, առասպել, ավանդություն, բուրդիզմ, զրադաշտականություն, կենսահայեցողություն*

Ժենյա Քալանթարյան – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի պրոֆեսոր

Женя Калантарян – доктор филологических наук, профессор кафедры современной армянской литературы и литературной критики ЕГУ

Zhenya Kalantaryan – Doctor of Philological Sciences, Professor at YSU Chair of History and literary Criticism of Modern Armenian literature

Էլ փոստ՝ j.Kalantaryan@ysu.am <https://orcid.org/0009-0006-7400-5658>



This work is licensed under a Creative Commons Attribution-Non-Commercial 4.0 International License.

Ստացվել է՝ 01.10.2025

Գրախոսվել է՝ 08.10.2025

Հաստատվել է՝ 06.11.2025

© The Author(s) 2025

Իհարկե, որ ես պիտի օգտվեմ գլխավորապես հին Ասիայի կրոններից, էպոսներից ու պոեզիայից: Մենք պետք է եվրոպանանք, բայց Արևելքի ոգով, բայց Արևելքի արևը մեր հոգում:

Ավ. Իսահակյան, «Հիշատակարան»

Ավետիք Իսահակյանի՝ տարբեր պահերի հիշատակարանում գրառած խոստովանությունները հուշում են, որ նա աստիճանաբար ձևավորել է ստեղծագործական իր ծրագիրը՝ այնտեղ կարևոր տեղ հատկացնելով Արևելքի ժողովուրդների և՛ բանահյուսությանը, և՛ փիլիսոփայությանը: Բանաստեղծի այս հրապուրանքը մեծապես լայնացրել է նրա տեսադաշտը և յուրահատուկ երանգ հաղորդել նրա ամբողջ ստեղծագործությանը: Եվ ամենևին պատահական չէ, որ ռուս, ֆրանսիացի և այլազգի բազմաթիվ գրողներ շատ բարձր են գնահատել Իսահակյանի տաղանդը՝ տեսնելով նրա մեջ, ազգայինից բացի, համամարդկային զգացումներ և մյուս ժողովուրդներին ըստ արժանվույն գնահատելու առաքինություն: Այս հարցում, բացի մարդկային հոգեկերտվածքի առանձնահատկություններից, Իսահակյանի կյանքում կարևոր դեր են կատարել տասնամյակներ շարունակ այլ ժողովուրդների մշակույթի հետ շփվելը, նրանց կենցաղին, հոգեբանությանն ու վարքագծին մոտիկից ծանոթանալը: Երկար տարիներ թերևս պարտադրված լինելով ապրել Եվրոպայի նշանավոր կենտրոններում՝ Բեռլին, Ժնև, Վիեննա, Հռոմ, Վենետիկ, Փարիզ, այցելելով նաև այդ քաղաքներին հարակից շրջաններ, շփվելով ժամանակի խոշորագույն գրողների, արվեստի գործիչների, նկարիչների, ընդհանրապես մշակույթի բնագավառի տարբեր գործիչների հետ, տիրապետելով մի քանի լեզուների, նա հսկայական փորձ է ձեռք բերել օտարներին, իրականում նաև ընդհանրապես մարդկային կյանքը իրապես ճանաչելու առումով: Չմոռանանք, որ այս ամենից առաջ և այս ամենին զուգընթաց՝ Իսահակյանն իբրև ազատ ունկնդիր ուսումը շարունակել է Լայպցիգի և Ցյուրիխի համալսարաններում՝ հետևելով հիմնականում գրականության, փիլիսոփայության ու փիլիսոփայության պատմության դասընթացներին:

Կարևորն այն է, որ նշված հանգամանքներից առավել շատ Իսահակյանին մտահոգում էին սեփական գիտելիքները հարստացնելու ձգտումը և կամքը՝ նպատակին հասնելու համար: Նա ուսումնասիրում էր փիլիսոփաներին՝ Նիցշեին, Շոպենհաուերին, Հարտմանին, Կանտին, Դարվինին, նաև անտիկ փիլիսոփաներին՝ Արիստոտելին, Պլատոնին...: Իսահակյանն իր մեջ հանձար էր զգում, ցանկանում էր լինել «հոգու արիստոկրատ», հասնել բարձրագույն նպատակին: Իր ժամանակի փիլիսոփաների մեջ Իսահակյանին առավելապես գրավում էր Նիցշեն և, ընդհանրապես՝ մեծ, հայտնի մարդ դառնալու գաղափարը: «Ես պիտի հերոս լինեմ - օ՛, ինչ մեծ ու վեհ զգացմունք, երբ հերոսական գործերից - կռվից հետո կրծքիս վերքեր, ճակտիս կնճիռներ,

գլխիս ուռու թարմ պսակ՝ ընկերներիս հետ կմտնեմ-կվերադառնամ իմ ծննդավայրը...»¹: Երիտասարդական այս ինքնավստահությունը, դժվարությունների միայն ռոմանտիկ կողմի պատկերացումը զուգակցվում էին անպայման հարուստ գիտելիքներ ձեռք բերելու կամքի հետ, որն իրագործելու համար իբրև օրինակ սկզբնապես պատկերացնում էր Նիցշեին՝ հետագայում որոշ ճշգրտումներ կատարելով փիլիսոփայական իր նախասիրությունների մեջ: Հետաքրքրականն այն է, որ ձգտելով շատ բարձր նպատակների, ցանկանալով լինել իսկապես հերոս ու հանճար՝ Բահակյանը պատրաստ էր իր գիտելիքները ծառայեցնել ժողովրդին:

Լինելով Եվրոպայի կենտրոնում, ուսումնասիրելով իր նշած նշանավոր դեմքերի աշխատությունները՝ Բահակյանը նախընտրում է Արևելքի փիլիսոփայությունն ու մշակույթը: Խորքային առումով թերևս զարմանալի չէ այս ընտրությունը, որովհետև իրականում եվրոպացիները ավելի բանական են, ունեն սթափ մտածողություն, Արևելքի ժողովուրդը, առաջին հերթին բանաստեղծները, ավելի հուզական են ու զգացմունքային, ինչն ավելի մոտ է Բահակյանի խառնվածքին: Այս առումով հատկանշական կարելի է համարել նրա բնութագրություններից մեկը. «Խելացի են ֆրանսիացի գրողները, նկարիչները, բայց նրանց պակասում է զգայականը, կիրքը, տարերայինը, նախնական նյութը՝ *matière le primitive* բնագդականը...»²: Իհարկե, Բահակյանը գնահատում է Եվրոպայի քաղաքակրթությունը, բայց դա համարում է մարդկային էության արտաքին շերտը և առաջնությունը տալիս է խորքային բովանդակությանը. «Ես թողեցի Եվրոպայի կեղևը և ընդունեցի հայրենիքինըս – ազատ և արձակ: Բսկ բովանդակությունս – համաշխարհային» (Հիշ., էջ 192): Այս ընտրությունն արդեն զուտ ցանկություն չէ, այլ գործունեության ծրագիր, որ նա իրագործում է մեծ հաջողությամբ: Բահակյանի ընտրության մեջ որոշակի դեր է կատարում ոչ միայն երիտասարդական հասակը, այլև նրա խառնվածքի որոշակի ռոմանտիզմը, որը բանաստեղծին հուշում է չպեղված արժեքներ հայտնաբերել դարերով հին և հեռավոր Արևելքում, ինչը բորբոքում էր բանաստեղծի երևակայությունը: «Ասիան, Արևելքը, որ հեռու է եվրոպական կոմֆորտից, որը խլում է մարդու ամբողջ ժամանակը, – այնտեղ մարդը, անհատը գոհ է իր աղքատ ապրուստից, բայց և մտածում է շատ բարձր բաների, հարցերի վերա: Արևելքը պոեզիայի և իդեալիզմի աշխարհ է...» (Հիշ., էջ 264): Իհարկե, դժվար չէ համոզվել, որ Եվրոպայի և Արևելքի միջև ընտրություն կատարելու հանգամանքը, թերևս հակասությունը թվացյալ է, որովհետև Արևելքի մշակույթին դիմելն ուներ մի քանի հիմնավոր պատճառներ: Նախ՝ դեռևս իր հայրենիքում՝ Ղազարապատում, եղած ժամանակ Բահակյանը հաճախ է հնարավորություն ունեցել շփվելու թափառական աշուղ-

¹ Բահակյան Ավ., 1977: Հիշատակարան, Եր., «Սովետական գրող» հրատ., էջ 113: Նույն աղբյուրից էջերը կնշվեն տեղում՝ (Հիշ, էջ ...) կերպով:

² Բահակյան Ավ., 2001: Աֆորիզմներ, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., էջ 326:

ների հետ, լսելու նրանց երգերը, ոգևորվելու դրանցով: Այդ երգերը մեծ ազդեցություն են թողել պատանի Բսահակյանի վրա, բորբոքել նրա երևակայությունը, ներքաշել երգի ու հեքիաթի աշխարհ: «Ինչքա՛ն, ինչքա՛ն էի սիրում աշուղ ամուն: Երբ գալիս էր, տոն էր սկսվում ինձ համար... Նրա սագն ու հեքիաթը այլափոխում էին իմ աչքում իրական շրջապատը: Հանկարծ մեր գավառի լեռները, ձորերը, դաշտերը վերածվում էին ուրիշ տեսակ մի աշխարհի, աննկարագրելի գեղեցիկ, առասպելական: Հրաշքի աշխարհ, որի լեռների բաշերով թռչում էին հրեղեն ձիերը, կտրիճները գնում էին անմահական խնձոր բերելու, չքնադագեղ աղջիկները մարմարյա ապարանքների մեջ կարոտով սպասում էին անվեհեր կտրիճներին, որոնց մեջ տեսնում էի և ինձ»³: Այդ տպավորությունների տակ է Բսահակյանը գրել որոշ լեգենդներ ու ավանդություններ (օրինակ՝ «Իրիցկնկա աղբյուրը», «Փերին» և այլն): Հետագայում բանաստեղծը պետք է խոստովանի. «Ես ավելի շատ պարտական եմ ֆոլկլորին, կարդացածս գրքերին, իմ թափառումներին և, իհարկե, Շիրակի պատմական-ճարտարապետական հուշարձաններին՝ Անի, Երեբունյք, Հառիչ, Մրեն, Մարմաշեն, Տեկոր... Դրանք են կաղապարել իմ հոգին ու հոգեբանությունը»⁴:

Նշվածը այն կարևոր պատճառներից մեկն է, որը Բսահակյանի ուշադրության կենտրոնում է պահում և՛ բանահյուսությունը, որի մասին ինքը խոստովանություն է անում, և՛ Արևելքն ընդհանրապես իր դիցաբանությամբ, առասպելներով և՛, իհարկե, փիլիսոփայությամբ: Բանաստեղծի ստեղծագործությունների մի զգալի մասի հիմքը ժողովրդական բանահյուսությունն է, որի հիման վրա է նա ստեղծել իր լեգենդները, զրույցները, առասպելները, առակները, հաճախ նաև հեքիաթները, որոնք, այսպես թե այնպես, գալիս են ժողովրդից: Ինչպես հայ գրողներից շատերը, այդպես էլ Բսահակյանը չի բավարարվել հայ բանահյուսության օրինակներով, այլ հաճախ է դիմել այլ ազգերի՝ մասնավորապես արևելյան ժողովուրդների բանահյուսությանը: Այդ ժամանակ շատ տարածված էին այսպես կոչված թափառական սյուժեները, որոնք նոր աղբյուր էին գրողների համար և նրանց հնարավորություն էին տալիս դուրս գալու ազգային շրջանակներից, լայնացնելու իրենց հորիզոնը: Այս տեսակետից առանձնահատուկ դեր ունեն Արևելքը, որի հինավուրց փիլիսոփայությունը, որը շատ կարևոր էր անցյալում, կրկին վերակենդանանում է: Այս հարցում, իհարկե, Բսահակյանը մենակ չէր: Նա ինքը բերում է Նիզամի Գյանջևիի օրինակը. «Նիզամին իր դիդակտիկական-փիլիսոփայական, ռոմանտիկ-ասպետական և ֆանտաստիկական պոեմների նյութերը քաղել է Արևելքում հին ժամանակներից ի վեր տարած-

³ **Բսահակյան Ավիկ**, 2000: Ավետիք Բսահակյան, Գիտական կենսագրություն, գիրք 1, Եր., էջ 67-68, 119:

⁴ **Ինձիկյան Արամ**, 1977: Ավետիք Բսահակյան, Եր., էջ 241:

ված ավանդություններից, լեգենդներից, գրույցներից, նաև իր ժողովրդի ֆոլկլորային գանձարանից»⁵:

Կար ոչ պակաս մի կարևոր հանգամանք: Դեռևս մի քանի դար առաջ Եվրոպայում սկսել էին մեծ ուշադրություն դարձնել Արևելքին: Իսահակյանի վրա կարևոր ազդեցություն են ունենում նաև Գյոթեի «Արևմտա-արևելյան դիվանը» և նրա մեկնությունները տարբեր մարդկանց կողմից: Իսահակյանին բախտ է վիճակվում սովորել նույն համալսարանում (Լայպցիգի), որտեղ 1765 թվականին սովորել էր Գյոթեն, և որտեղ Իսահակյանը զգում է Գյոթեի անտեսանելի ներկայությունը: Գյոթեից բացի, և նրանից հետո գերմանական շատ փիլիսոփաներ ևս մեծապես հետաքրքրված էին Արևելքի փիլիսոփայությամբ և զբաղվում էին այդ փիլիսոփայության մեկնաբանություններով: Այս մասին Ավիկ Իսահակյանը գրում է. «Իսահակյանին միշտ հետաքրքրել է Արևելքի հին իմաստությունների մեկնաբանումը գերմանական դասական հեղինակների և փիլիսոփաների կողմից, լինի դա Գյոթեի «Արևմտա-արևելյան դիվանը» պոետական շարքը կամ Օլդենբերգի նշանավոր գիրքը Բուդդայի կյանքի մասին: Բայց առաջին հերթին, Նիցշեի նշանավոր մեկնաբանությունները հին պարսկական կրոնական ուսմունքներից մեկի՝ զրադաշտականության հիմնադիր և քարոզիչ Զրադաշտի (Զորոաստրի) կյանքի և ուսմունքի վերաբերյալ»⁶: Արևելքի նկատմամբ բուռն հետաքրքրությունը չի սահմանափակվում բուն Եվրոպայով, թափանցում է նաև հայ իրականություն, ի դեպ՝ դարձյալ գերմանական նախասիրությունների ճանապարհով: Այս առումով կարելի է հիշատակել Ստեփանոս Նազարյանի դոկտորական ատենախոսությունը Ֆիրդուսու մասին, որտեղ նա կարծես բացահայտում է Արևելքի պոեզիայի նկատմամբ եվրոպացիների հետաքրքրության պատճառը՝ գրելով. «Ֆիրդուսու մոտ չի նկատվում ձգտում դեպի արտահայտությունների արհեստականությունը. դեպքերի պատմությունն այստեղ ասիական ոգու փարթամությամբ նրբերանգված է առասպելներով, որ նպաստում է նկարագրությունների կատարելությանը: ... Այսպիսի զարմանալի կառուցվածքով բանաստեղծական ստեղծագործությունն արժանի է լուսավորյալ եվրոպացու ուշադրությանը: Հեթանոս աշխարհի հերոսներից, աստվածներից և աստվածուհիներից բացի, որոնք դարեր շարունակ խաղացել են հերոսական կյանքի բեմում, եվրոպական միտքը իր համար հարուստ սնունդ, բարձր հաճույք կգտներ նոր մտահղացումների, երևակայության նոր պատկերների, բարքերի նոր նկարագրերի, խիզախ ռազմիկների նոր մարտադաշտերի այդ աշխարհում»⁷:

Այստեղ Նազարյանը բացում է եվրոպացիների՝ Արևելքով հետաքրքրվելու գաղտնիքը. **Եվրոպային անհրաժեշտ էր մտքերի, գաղափարների, հույզերի**

⁵ Իսահակյան Ավ., 1977: Երկերի ժողովածու, հ. 5, Եր., «Սովետական գրող» հրատ., էջ, 253:

⁶ Իսահակյան Ավիկ, նշվ. աշխ., էջ 248:

⁷ Назарян Ст., 1851. Абулькасим Фирдоуси Туси: творец книги царей известной под названием Шах-Наме. М., с. 35.

ու պատկերների թարմություն, ինչը կարող էր նոր շունչ հաղորդել եվրոպական արվեստին ու փիլիսոփայությանը: Նախորդ դարավերջից սկսած՝ եվրոպական գիտությունների՝ կենսաբանության, հոգեբանության, ֆիզիկայի և այլ բնագավառներում նկատելի նվաճումները, միաժամանակ տնտեսական դժվարությունները կարծես գերհոգնած վիճակ էին ստեղծել Եվրոպայում, որը զարթոնքի ուղիներ էր փնտրում: Նպատակին հասնելու ուղիներից մեկը դարձավ Արևելքը: Սակայն այստեղ չենք կարող անտեսել մի հանգամանք ևս: Պատկերավոր ասած՝ թեև Արևելքը «թարմ արյուն էր ներարկում» Արևմուտքին, հատկապես Եվրոպային, բայց Եվրոպան շարունակում էր իր առավելության բարձրությունից նայել Արևելքին: Արաբ արևելագետ Էդուարդ Ու. Մայիդը այդ մասին գրում է. «...Եվրոպական մշակոյթի գլխաւոր բաղկացուցիչը ճիշդ այն է՝ ինչ որ զայն միահեծան դարձուցած է Եվրոպայէն ներս եւ դուրս միաժամանակ, այսինքն՝ եւրոպական ինքնութեան գաղափարը որպէս գերադաս ինքնութիւն, համեմատած բոլոր ոչ եւրոպական ժողովուրդներուն եւ մշակոյթներուն»⁸: Ու. Մայիդը Եվրոպայի «բարեհոգության» ներքո վտանգներ է տեսնում, որի մասին ակնարկում է. «Առաւել եւս կ'այ Արեւելքի մասին եւրոպական գաղափարներու միահեծանութիւնը - գաղափարներ, որոնք իրենց կարգին կը վերարտադրեն արեւելեան յետամնացութեան հանդէպ եւրոպական գերադասութեան գաղափարները...» (ն. տ.):

Եվրոպայում Իսահակյանի ուսանած տարիները համընկան Արևելքի նկատմամբ փնտրտուքի հետ և իրենց շրջապատույթի մեջ առան նրան: Սակայն ի սկզբանե պետք է նշել, որ բանաստեղծը որոնումների մեջ չկորցրեց իր անհատականությունը, այլ ազդեցությունների, նմանությունների, ոգևորությունների ոլորտից դուրս եկավ հարստացած գիտելիքներով և իր ինքնությունը գտած: Այսինքն՝ նա սովորեց բոլորից, ազդվեց շատերից և, եթե կարելի է ասել՝ փիլիսոփաներից ստացած բեռն ուսերին՝ գնաց սեփական ճանապարհով: Բնչպես շատ եվրոպացիների, այնպես էլ Իսահակյանին ճանապարհը «տարավ» դեպի Արևելք: Ե՛վ Իսահակյանի թողած գրական ժառանգության տարբեր էջերում, և՛ ժամանակակիցների հուշերում բազմիցս շոշափվում է Արևելքի կարևորության խնդիրը: Ի դեպ, Արևելքը ճանաչելու համար Իսահակյանը, թվում է, կարիք չունեի Արևելք գնալու, որովհետև ամբողջ Եվրոպայի համար Արևելքը դարձել էր ուշադրության առարկա, որը Շպենգլերի բնորոշումով՝ «դեպի մայրամուտ գնացող» Եվրոպային կարող էր փրկություն բերել: Պատկերավոր ասած՝ Եվրոպան Արևելքը «տեղափոխել էր իր մեջ» մատչելի դարձնելով արևելյան արժեքների յուրացումը: Ավետիք Իսահակյանի որդի Վիգեն Իսահակյանն իր «Հայրս» գրքում պատմում է Եվրոպայում բացված մի հրաշալի թանգարանի մասին, որն ամբողջովին հագեցած էր արևելյան ոգով. «Իրոք, այստեղ հավաքված էին հին արվեստի արժեքավոր նմուշներ, որոնք

⁸ Էդուարդ Ու. Մայիդ, 2025: Արևելաբանություն, Եր., էջ 54:

բերվել էին Չինաստանից, Ճապոնիայից, Հնդկաստանից, Պարսկաստանից»⁹: Նույն գրքում նա շարունակում է. «Հայրս մխիթարանք է որոնում Հեռավոր Արևելքի փիլիսոփայության մեջ, որի, մանավանդ բուդդայիզմի ուսմունքի հանդեպ ինքը դեռևս երիտասարդ տարիքում մեծ հետաքրքրություն էր հանդես բերել: Իսկ սա քարոզում էր հոգու հեզություն ու խոնարհություն, պետք է մեջդ մարես քո անհատական կյանքը և թողնես քեզ տիեզերական կամքին» (ն.տ., էջ 101-102), այսինքն՝ նոր բարոյագիտություն, որ տանում էր դեպի ասկետիզմ: Մի ուրիշ առիթով Չարենցի հետ զրուցելիս Իսահակյանը հիշեցնում է Վլադիմիր Սոլովյովի խոսքը՝ «Արևելքից է գալու լույսը» (ն.տ., էջ 199): Արևելքով Իսահակյանի ոգևորվածության փաստերը շատ են թե՛ իր՝ բանաստեղծի գործերում, թե՛ ուրիշների հիշատակություններում:

Սակայն Արևելք կոչվածը ընդհանրացված երևույթ է, որն իր մեջ ամփոփում է տարբեր երկրներ, ժողովուրդներ, ազգեր, լեզուներ, կրոններ, բարքեր: Իրականության մեջ Արևելքը աշխարհագրական հասկացություն է, երկրագնդի չորս կողմերից մեկը, որ հակադիր է Արևմուտքին: Այն նաև մշակութային առումով է հակադիր Արևմուտքին, ամեն դեպքում՝ տարբեր է նրանից: Իրականում Իսահակյանի փնտրտուքը վերաբերում է ոչ թե մեկ, այլ մի քանի մշակույթների՝ արաբական, պարսկական, չինական, հնդկական, հրեական և այլն: Եթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ հայկական մշակույթը աշխարհագրական առումով միջանկյալ դիրք է գրավում Արևմուտքի և Արևելքի միջև և, ըստ էության, գաղափարապես մոտ է Արևմուտքին, իսկ հուզականությամբ՝ Արևելքին, ապա կարող ենք ասել, որ Իսահակյանը ձեռնամուխ է եղել շատ բարդ մի խնդրի: Չմոռանանք նաև մի կարևոր հանգամանք. ինչպես արդեն ասվել է, դեռևս մանուկ հասակում Իսահակյանը լսել է թափառիկ աշուղներին, որոնք արևելյան հեքիաթներ էին պատմում ու երգեր երգում, ինչը մեծ տպավորություն է թողել մանուկ Իսահակյանի վրա, բորբոքել նրա ռոմանտիկ երևակայությունը: Այսինքն՝ Արևելքն արդեն որոշակի տեղ ուներ Իսահակյանի սրտում: Բայց կարելի է մտածել, որ եթե դազարապատյան շրջանի իսահակյանական ոգևորությունը նրա պատանեկան ռոմանտիկ տպավորությունների արդյունք էր, որ ավելի շատ ազդում էր նրա երևակայության, քան գիտակցության վրա, հետագայում նա գիտակցական ընտրություն է կատարում՝ արևելյան բանահյուսության մեջ փնտրելով փիլիսոփայական խորքային գաղափարներ:

Իսահակյանը հենվում է հիմնականում ժողովրդական բանահյուսության վրա, իր մշակումներն անում այդ բնագավառից: Ի սկզբանե նա շատ բարձր էր գնահատում ժողովրդական բանահյուսությունը: Մտ. Լիսիցյանին գրած նամակում բանաստեղծը խոստովանում է, որ իր վրա մեծ ազդեցություն է թողնում ժողովրդական բանահյուսությունը, և ինքը ոգևորված է դրանով:

⁹ Իսահակյան Վ., 2011: Հայրս, Եր., «Գասպրինտ» հրատ., էջ 59:

«...այժմ պրոֆեսորի առաջնորդությամբ և ընտրությամբ կարդում ենք ազգերի դյուցազնական գրականությունից – Զենդարվեստից, Շահ-Նամեից, Ղուրանից, Հին Կտակարանից, Հոմերոսից, Վիրգիլիոսից, Ռոլանդից, Սիդից, Նիբելունգներից, Կուդրոնից, Իլյա Մուրոմեցից և այլն: Այդ բոլորի վրա - մանավանդ այդ մասնագիտության վրա ես այժմ կատարյալ սիրահարված եմ»¹⁰: Բանաստեղծը նաև կարծում է, որ հայ բանահյուսությունը անհրաժեշտ չափով չի ուսումնասիրված, հայ դյուցազունները՝ Հայկն ու Արամը, Դավիթն ու Մհերը և մյուս հերոսական կերպարները, անհրաժեշտ չափով չեն ուսումնասիրվել ու գնահատվել: Այդ պատճառով էլ այդպես մտածողները նրա աչքում երևում են «հայ ժողովրդի պատմությունը անծանոթ մարդիկ»: «Մի՞թե մեր Հայկն ու Արամը, Արան ու Տիգրանը, Վահագն ու Շարան, Արամազդն ու Շիրհարը, Դավիթն ու Մհերը...նույնպիսի ազգային դյուցազներ – ազգի բովանդակություններ չեն, ինչպես Ռոստոմը, Սիգֆրիդը Հերակլը, և այլն:...Երբ ես հայրենիք էի,- շարունակում է Իսահակյանը,- մեր ամեն բանը – գրականություն, թատրոն, գեղարվեստ, լրագիր խոշորացույցով էի տեսնում, իսկ հիմա այստեղ – մեր ամեն բանը՝ տղայական խաղալիք է թվում ինձ, - և հանկարծ 4000 տարի կյանք ունեցող ազգը դուրս է գալիս անհայր, անմայր, անտուն, անհայրենիք, անանցյալ-ինչո՞ւ, որովհետև մենք ժողովրդի մեջ, նրա հետ, նրանով չենք ապրում...», - գրում է Իսահակյանը (ն.տ. էջ 19):

Նախ՝ Իսահակյանի այս տպավորությունից հետո բավականաչափ ուսումնասիրվել է հայ բանահյուսությունը ու նաև շատ գեղարվեստական մշակումներ են կատարվել այդ թեմաներով: Երկրորդ՝ հայ բանահյուսության գեղարվեստական մշակումներն արծարծում են հիմնականում հայրենասիրական հարցեր, իսկ ահա արևելյան բանահյուսության թեմաներով Իսահակյանի մշակումներն ունեն գերազանցապես փիլիսոփայական բովանդակային ուղղվածություն: Այսինքն՝ ժողովրդական բանահյուսության վրա հիմնված իսահակյանական յուրաքանչյուր մշակում, որ ժողովրդին էլ այն վերաբերի, խորքում ունի փիլիսոփայական մի ընդհանրացում: Դա կարելի է ցույց տալ Իսահակյանի մշակած շատ գործերի մեջ: Օրինակ՝ «Սաադիի վերջին գարունը», որ տեղ է գտել հեղինակի 5-րդ հատորում (2014 թ.)¹¹, վերջանում է շատ խորքային մի տողով՝ «Ծնվում ենք ակամա, ապրում ենք զարմացած, մեռնում ենք կարոտով...» (էջ 80): Այս միտքն այնքան ընդհանրական է ու ընկալելի, որ թվում է, թե յուրաքանչյուրը կարող էր հենց այդպես էլ մտածել, և կարծես դրա համար հիմք կա: Իսահակյանն այս փիլիսոփայական խոհը գրել է 1923 թ. Վենետիկում, բայց հարցի շուրջ մտածումը տևական ընթացքի արդյունք է: Դեռևս 1893 թ. նա իր հիշատակարանում գրել է «...Եթե բնության հզոր օրենք-

¹⁰ Իսահակյան Ավ., 1979: Երկերի ժողովածու, հ. 6, Եր., «Սովետական գրող» հրատ., էջ 18:

¹¹ Այս մասին տե՛ս Իսահակյան Ավ., 2014: Երկերի լիակատար ժողովածու 14 հատորով, հ. 5, էջ 919 (այսուհետև այս հատորից մեջբերումների հղումները կտրվեն տեքստում՝ հատոր, տարբերակ, էջ):

ների դիմաց անխտիր հավասար են մարդիկ, էլ որտեղից կարելի է լինել «մեծ մարդ»: Օսվում ես ակամա, ապրում ես աննպատակ, մեռնում ես ակամա և դարձյալ ծնվում-ապրում-մեռնում-փոշիանում. էլ ի՞նչ «մեծ մարդ» (Հիշ., 1893, էջ 47): Տպավորությունն այնպիսին է, որ ինչքան էլ բանահյուսության ու դիցաբանության բովանդակությունը ծանոթ լինի բանաստեղծին, նա դրանք զուգակցել ու համապատասխանացրել է սեփական խոհերին ու ընկալմանը: Այս ամենից հետևում է, որ նա ընտրում է բարոյախոսական ու դաստիարակչական այնպիսի թեմաներ, որոնք իրենց փիլիսոփայական խորքով հրապուրիչ են և մոտ են սեփական կենսահայեցողությանը:

Կարելի է ասել, որ Իսահակյանին շատ կոդմերով ավելի մոտ է եղել պարսկական մշակույթը: Դեռևս պատանեկան հասակում Իսահակյանը փորձել է թարգմանել Հաֆեզի սիրային բանաստեղծությունները և այդ նպատակով այցելել հարևան գյուղ՝ այնտեղ պարսիկ մի բեյից պարսկերեն սովորելու համար: Պարսկական մշակույթը ավելի մոտ զգալու առումով կար ավելի կարևոր պատճառ: Դա Նիցշեի «Այսպես խոսեց Զրադաշտը» գիրքն է, որի հիմքը պարսկական զրադաշտական կրոնն էր, և որը շատ մոտ էր Իսահակյանի սրտին՝ գուցե ավելի շատ Նիցշեով, քան թե բուն կրոնով հրապուրվելու առումով: Պատահական չէ, որ նա թարգմանել է Նիցշեի այդ գիրքը:

Բանահյուսության վրա հիմնված մշակումներն ունեն մի առանձնահատկություն, որը բանավեճերի տեղիք է տալիս: Խնդիրն այն է, որ առասպելները մի ժողովրդից անցնում են մյուսին, կրում նոր ազդեցություններ, փոխանցվում մի ուրիշ ազգի, դառնում են մի նոր տարբերակ, որի «ծննդավայրը» եթե չի էլ կորչում, դառնում է թեական: Այդպիսի մի գործ է «Շիդհարը» առասպելը, որը Իսահակյանի տարբեր տարիների մշակումների պարագայում մեկ կոչվել է «Թափառական Հրեան (Հայկական առասպել)», մերթ՝ «Շիդհարը (Պարսկական առասպել)» (հ.5, 2014, էջ 919): Ամենայն հավանականությամբ Շիդհարի մասին Իսահակյանը լսել է նախ հայերեն (այստեղից էլ՝ «հայկական առասպել» անվանումը), հետագայում գտել է իրական աղբյուրը: Շիդհարն առասպելներում կրել է Ահասֆեր, Ահասֆերուս անվանումները, որոնց ընթերցողը հանդիպում է նաև Մատթեոս Փարիզեցու հիշատակարանում (տե՛ս ն.տ.): Մի քիչ անհավանական է թվում առասպելին գերմանական ծագում վերագրելը (ընդ որում՝ ոչ միանշանակ), որին հանդիպում ենք նշված ծանոթագրության մեջ. «Ինչպես վկայում է հեղինակն ինքը «Հայրենի հուշեր»-ում, տակավին 10-12 տարեկան հասակում Ղազարապատում է լսել թափառական հրեայի հայկական գրույցը (ԵԺ IV, 1975, էջ 118): Գերմանական առասպելի և Օհան տացուի գրույցի միահյուսումից բանաստեղծը կերտել է վայրկյանի և հավերժության մասին փիլիսոփայող մեծ թափառականի կերպարը, որին մերթ՝ Ահասվեր անունն է տվել, մերթ՝ Շիդհար»¹²: Հետաքրքրու-

¹² Երկու տարբեր հրատարակությունների հիշատակումը պայմանավորված է այն բանով, որ 2014 թ. հիշատակումը հենվում է նաև 1975 թ. 4-րդ հատորում տեղ գտած հուշերի վրա:

յունից գուրկ չէ այն հանգամանքը, որ սկզբնապես այդ առասպելը (առանց ստեղծման տեղի նշման) Իսահակյանը գրել է հայրենի Ղազարապատում՝ «Թափառական Հրեա» (Հայկական առասպել) ենթավերնագրով: Հնարավոր է, որ այդ առասպելի մասին հեղինակը լսել է հենց Շիրակում, որն էլ նրան հիմք է տվել լրացուցիչ վերնագրի համար: Այսուհանդերձ, էականը փիլիսոփայական բովանդակությունն է, տիեզերական հավերժության և մարդ արարածի անցողիկ, ակնթարթային կյանքի հակադրությունը, որի մասին առօրյա կյանքի ճղճիմ հոգսերի մեջ թաղված մարդը չի էլ մտածում: «Այն թռչող վայրկյանը, որ մարդիկ կյանք են անվանում, հավերժական է թվում այս խեղճերին, խորհում է Շիրհարը: ...Սակայն, ո՛վ փրկարար պատրանք...Իրենց խիտուն չից տիեզերական օվկիանի խորհուրդներն են լուծում և օրենքներ են սահմանում անհունին և անսահմանին...Անապատի վրայից սահող ամպի ստվերից ավելի ստահող է ձեր էությունը...Սակայն տեսնենք վաղը ի՞նչ է լինելու...» (հ.5, 2014, էջ 115): Հավերժի տարբեր փուլերից անցնող Շիրհարն ինքը հենց հավերժի խորհրդանիշն է՝ անցնող դարերին ականատես ու նորին սպասող, ում համար կյանքը հավերժ փոփոխվում է, իսկ մահկանացու մարդու համար այդ իմացությունն անհասանելի է ...: Ըստ այսմ՝ այս առասպելը կարելի է վերագրել բոլոր ազգերին, ինչը հերթականորեն արել է Իսահակյանը:

Այսուհանդերձ, ընդհանուր Արևելքի յուրաքանչյուր առանձին երկիր ունի իր առանձին բարքերն ու ապրելակերպը, ուստի Իսահակյանն իր մշակումների և դրանց փիլիսոփայական ընդհանրացումների մեջ շեշտադրում էր տվյալ ազգին բնորոշ կենսահայեցողությունը: Այս առումով կարելի է ասել, որ Իսահակյանի բազմաթիվ գրույցների, առասպելների, վիպասքերի, էպոսների կարճառոտ փիլիսոփայական ընդհանրացումների մեջ միանգամայն տեսանելի է դառնում այս կամ այն ազգի կամ ժողովրդի մտածողությունը: Այս պարագայում Իսահակյանի ստեղծագործության մեջ վերացական Արևելքը որոշակիանում է իր առանձին միավորների մեջ:

Իսահակյանը տարբեր ժողովուրդների բանահյուսությունից ընտրում է տարբեր թեմաներ և տալիս ժանրային համապատասխան կադապար: Ահա հնդկական «Ուշինարա» գրույցը, որի հիմքում ընկած է մարդկային առաքիության ու պարտքի սրբության մի օրինակ: Ուշինարան արդար և իմաստուն դատավոր է, որի ազնվությունն ու բարությունը կասկածի տակ են դրվում, երբ նրա սենյակն է թռչում անգղից հալածված մի աղավնի և օգնություն խնդրում: Անգղը հետևում է նրան և պահանջում աղավնուն՝ բացատրելով, որ ինքը միայն աղավնու միս է ուտում: Անգղը ձևացնում է, որ պատրաստ է աղավնուն հանգիստ թողնել, եթե Ուշինարան իր մարմնից համապատասխան քանակով միս տա: Ուշինարան համաձայնվում է, բայց նրա փերթ առ փերթ հռչակված մարմինը չի հավասարակշռում աղավնու քաշին, և նա ստիպված է լինում իրեն գոհել հանուն աղավնու: Այս գրույցը ժանրային իմաստով ավելի շատ առակ է հիշեցնում, որովհետև անգղի տեսքով հանդես եկած Ինդրան

գրույցն ամփոփում է առակին բնորոշ բարոյախոսությամբ. «Ժողովուրդների մեջ պիտի չհանա քո անունը, և հավիտյան պիտի ապրիս դու անմահ փառքով ու փայլով, որովհետև պարտքի սրբության հավատարիմ եղար» (հ.5, 2014, էջ 212):

Հնդկական դիցաբանությունից, առասպելներից Իսահակյանի ընտրած ու մշակած շատ նյութեր իրենց բովանդակությամբ որոշակիորեն արտահայտում են հնդիկների ազգային բնավորությունը: Հնդկական առասպելներն ու գրույցներն ունեն բարի, մարդասիրական բնույթ (անշուշտ, ոչ մի տեղ բացառությունները չեն բացառվում) և ծառայում են մարդու փրկությանը: Նման բովանդակություն ունի «Բուդդհան թոչուն» առասպելը, որը պատմում է այն մասին, թե ինչպես թոչունի տեսք ստացած Բուդդհանը իրեն նետում է խարույկի մեջ՝ դառնալով քաղցած երեխային կերակրելու խորոված: Հանուն մարդու փրկության: Թոչունի հոգին կրկին դառնում է մարդաձև Բուդդհան՝ իրականացնելու համար «հին չորս սրբազան ճշմարտությունները – փրկելու համար մարդուն, ծնվելու, ծերանալու և մեռնելու անհրաժեշտության տանջանքներից և հասնելու համար բացարձակ երանությանը-Նիրվանային» (հ. 5, 2014, էջ 220): Այս առասպելի մեջ դրսևորվել է ոչ միայն հնդիկների ազգային խառնվածքը, այլև նրանց կրոնը, հավատը, որը օգնում է հաղթահարելու կյանքի բազմաթիվ դժվարություններ: Թե՛ պարսկական, թե՛ հնդկական ավանդությունների աստվածները պատժելուց բացի, ներել գիտեն և մարդուն մեղքը ճանաչելու ու ներվելու հնարավորություն են տալիս: Ահա այդ վկայություններից մեկը՝ «Օմար Խայամի վեճը աստծու հետ» ավանդությունը: Երբ պարսիկ բանաստեղծ Օմար Խայամը «ոսկեղեն նարգիզների մեջ նստած» պատրաստվում էր գինի վայելելու, չար քամին արագորեն վրա է հասնում նթափում գինին հողի վրա: Քանի որ ամեն ինչի հիմքը և պատճառը Աստված է, ուստի Խայամը հանդիմանում է Աստծուն. «Թո՛ղ բերանը լցվի հողով, // Ուրը խմեց իմ գինին: // Ի՞նչ արեցիր, միթե դու էլ // Թունդ հարբած ես, աստվա՛ծ իմ»: Աստված պատժում է Խայամին հանդգնության համար՝ նրա բերանը ծռելով ու լեզուն կարկամ դարձնելով: Պատժված միջոցին անգամ Խայամը հանդիմանում է Աստծուն՝ «Թե վատ անեմ, թե վատ խոսեմ, // Դու էլ ինձ վատ պատիժ տաս, // Ուրեմն ինչ է իմ ու քո մեջ // Տարբերությունն, աստվա՛ծ իմ»: Աստված զարմանում է, թե ինչպես մի հողեղեն արարած կարող է նման խելացի լինել, ներում է Խայամին՝ «վերստին շնորհելով նրան և՛ ծիրանի գինի, և՛ ավելի իմաստուն լեզու»: Մինչև այժմ քննարկված գործերը կարծես վերջանում են երկնային ուժերի և մարդկանց հաշտությամբ:

Ավ. Իսահակյանի մշակած արևելյան լեգենդների ու առասպելների մեջ կան բռնակալների կերպարներ, որոնք աչքի են ընկնում դաժանությամբ, ինչպիսիք են չինական պետության տեր Շի-Հոանգ-Տի Բողդիխանը և Մեծ մոնղոլ Չինգիզ խանը: Մեր ստացած տպավորությունը այս տիրակալների մասին կարող է համոզիչ չլինել, բայց մեզ թվում է, թե Հեռավոր Արևելքի այս խա-

ներն իրենց վարքագծով էականորեն տարբերվում են Միջին Արևելքի՝ Պարսկաստանի, Հնդկաստանի տիրակալներից: Հնարավոր է, որ այս պարագայում Իսահակյանի մշակումների ընտրության մեջ պակասում են «բարի թագավորները», ամեն դեպքում հիշված գործերում շեշտը դրվել է բռնակալների դաժանության վրա: Բողոքիսանի նկարագրությունը սկսվում է չափից դուրս մոայլ գույներով, այնքան, որ ընթերցողը չի կարող որևէ դրական սպասում ունենալ այս բռնակալից: «Երկնային պետության տերը՝ Շի-Հոանգ-Տի Բողոքիսանը, երկնքի պես հպարտ ու բարձրամիտ, նստել էր փղոսկրե գահույքի վրա՝ մոայլ ու դաժան: Նրա աչքերի մեջ մրրկում էր զայրացկոտ Դեղին ծովը, որ անդուլ ճանկոտում է Չինու ափերը: Եվ նրա խոշոր ճակատի վրա կնճիռները Գոբի անապատի օձերի նման գալարվում էին: Բազմել էր նա մտատանջ և դժնատեսիլ, ինչպես մթազին ամպը, որ շանթ ու որոտ ունի կրծքում խտացած» (հ.5, 2014, էջ 117): Այս մոայլ նախաբանն արդեն իսկ ժխտում է Բողոքիսանից որևէ դրական սպասում: Նշված առասպելն ունի խորքային շերտեր, որոնցում փիլիսոփայական հարցերը տարբեր տեսանկյունից են ներկայացվում: Առաջին հայացքից ընթերցողի առաջ պատկերանում է բռնակալ Բողոքիսանը, ով հրամայում է ոչնչացնել բոլոր գրքերը, մագաղաթները, որովհետև դրանք չեն կարողանում բացահայտել, թե ինչ է նյութը, ինչ է տիեզերքը, ինչ է ժամանակն ու տարածությունը: Հարցերի պատասխանները չգտնելու համար բոլոր գրքերն այրում են Բողոքիսանի հրամանով, իսկ հարցերին պատասխանել անկարող իմաստունները՝ գլխատվում: Խնդիրն այստեղ Բողոքիսանի դաժանությունը չէ միայն, այլ անսահման տիեզերքի հանդեպ մարդկային ուժի փոքրությունը, միլիոնավոր երևույթների պատճառի ու հետևանքի բացատրության անհնարինությունը: Այս երևույթի փիլիսոփայական բացատրությունը տալիս է ամենածեր իմաստունը. «... անհուն է, անսկիզբ, անափ, անըմբռնելի տիեզերքը իր ժամանակով ու տարածություններով, անհամար աստղեր ու արևներ են ծնվում ու մեռնում, ինչպես վայրկենական երևույթներ հավերժության մեջ, ինչպես մանր խխունջներ օվկիանոսի մեջ: Տիեզերքը լցված է ավելի շուտ հույլերով, մոլորակների անթիվ երամներով, քան մեծագոր մեր արքայի հսկայական շտեմարանները բրնձի հատիկներով, քան փեթակները՝ մեղուների պարսերով...» (ն.տ., էջ 119-120): Ըստ այս ծեր իմաստունի՝ անգամ անհամար, անհամար դարերը չեն կարող պարզել երևույթներն ու դրանց պատճառները: Մարդու և անձամբ իր անկարողությունն զգալով՝ Բողոքիսանը հրահանգում է հրովարտակել, որ պետք է սպանել Միտքն ու Ոգին, որովհետև դրանք տանում են դեպի պատճառների բացահայտման անհնարինություն և անհուսություն: Եվ Բողոքիսանը ինքնասպան է լինում: Մահից առաջ նա պատվիրում է ապրել անգիտության մեջ՝ ուրախ և երջանիկ: Գուցե կարելի է մտածել, որ Բողոքիսանի դաժանությունը և բռնակալ լինելը նրա հոգեբանական ապրումների և տիեզերքի բնույթը ճանաչել չկարողանալու անգործությամբ են պայմանավորված: Երկրներ նվաճած Բողոքիսա-

նը անգոր է իրեն հուզող հարցերի պատասխանն ստանալ, և այդ անգորությունը ոչնչացնում է իրեն իր իսկ աչքում: Մեփական ոչնչության ըմբռնումը նրան ինքնասպանության է դրդում: Քրիստոսից 200 տարի առաջ ստեղծված այս պատմության արձագանքը կարելի տեսնել Աստվածաշնչում. կենաց ծանոթից անմահական խնձոր ուտելու համար Ադամն ու Եվան վռնդվում են դրախտից, որի պատճառը արգելված, թերևս ավելի ճիշտ՝ անհասանելիի սահմանը խախտելն է, մարդուն տրված չէ այդ հնարավորությունը: Թերևս լինեն վիճաբանողներ, ովքեր կարող են բազմաթիվ օրինակներ բերել վերջին մեկ-երկու դարերի գյուտերից, որոնք վերաբերում են տիեզերքին: Բայց ո՞վ կարող է ասել, թե այդ գյուտերը չհայտնաբերված երևույթների քանի տոկոսն են կազմում...

Այլ իմաստ ունի «Չինգիզ-խանը»՝ հավանաբար ավանդությունը, որի հիմքում այն իմաստությունն է, որ մարդու հզորությունը ժամանակավոր երևույթ է, մահը՝ հավերժական, հզոր, և երիտասարդ տարիքում մարդը չի մտածում կամ հազվադեպ է հիշում մահվան մասին՝ այն համարելով շատ հեռու և ոչ իր համար: Իսկ Չինգիզ խանի հզորությունն անվիճելի էր. «Ազգերի արյունով շաղախեց Չինգիզ-խանը Ղարա-Ղորումի պարիսպները, և ազգերի հազարհազար ու բյուր գանգերով բուրգ ու աշտարակ շինեց Չինգիզ-խանը» (ն.տ., էջ 122): Այլ է ծերացած խանը. սառել են զգացմունքները, անգամ մատդաշ գեղեցկուհիներին չի կարողանում համբուրել, նրանց մերկ ու գեղեցիկ մարմինները ոչ մի հույզ չեն արթնացնում նրա մեջ, ձի նստել այլևս չի կարողանում, սուր բռնել ևս...Նա հանդիմանում է վեզիրին, որ դավաճանաբար մահին ներս է թողել, իսկ մահը պատասխանում է. «Ես հեռվից չեմ եկել, ես միշտ քո մեջն էի, քեզից անբաժան. երբ երիտասարդ էիր ու առույգ, դու էիր ինձ հաղթում, բայց ես մաքառելով ուժերդ մաշեցի. հիմա հաղթահարված ես դու, վերջին խոսքդ ասա և գնանք...» (ն.տ., էջ 127): Ի տարբերություն Բողդիխանի, որ հետևորդներին պատվիրում էր ապրել անգիտակից կյանքով ու երջանիկ, Չինգիզխանը վեզիրին պատվիրում է թունավորել բոլոր ծովերն ու օվկիանոսները, որ իր հետ մեռնեն բոլորը: Բայց քանի որ դա հնարավոր չէր, ուստի Իսահակյանը պատմությունը վերջացնում է լրացուցիչ բացատրություն չպահանջող տողով. «Վեզիրը չլսեց խանի հրամանը, որովհետև Մահը բռնել էր նրա լեզուն» (ն. տ.):

Իսահակյանի մշակած չափածո առասպելները, ավանդավեպերը, գրույցներն ունեն խրատական, դաստիարակչական, փիլիսոփայական բովանդակություն: Օրինակ՝ «Աթթիլան և իր սուրը» առասպելը պատմում է Արևմուտքի դեմ Աթթիլայի դաժանության մասին, ով արյան մեջ թաթախեց «Եվրոպան մինչև Գալլիա» և ստացավ իր պատիժը՝ արդարացնելով այն ասացվածքը, թե սուր ճոճողը սրից կմեռնի: Իսահակյանի մշակումներում դավաճանները, բռնակալները և դաժան մարդիկ ստանում են համապատասխան պատիժը: Այդ մասին է պատմում «Յահվեի վրեժը» ավանդագրույցը, ըստ որի՝ մահվան

վիճակի հասած Մովսես մարգարեն երբ Յահվելին (Աստծուն) խնդրում է իրենից վանել օրհասի ժամը, մինչև ինքը հասնի հայրենի երկիր, Յահվեն պատժում է նրան՝ հայրենի երկրի ու ցեղի ուրացման համար, թեև դա եղել էր միայն մի պահ նրա կյանքում, երբ նա իրեն եզիպտացի էր համարել:

Բանախյուսական պոեմներին, խրատական առակներին ու գրույցներին զուգահեռ՝ Իսահակյանը կատարում է նաև փիլիսոփայական բնույթի թարգմանություններ, որոնց ակունքը ևս արևելյան է:

Անհրաժեշտություն չենք տեսնում մեկ առ մեկ անդրադառնալու Արևելքը ներկայացնող բոլոր ավանդություններին, գրույցներին ու առասպելներին, որոնք զգալի տեղ են գրավում Իսահակյանի գրական ժառանգության մեջ: Ընդհանրության մեջ այդ բոլոր գրույցներն ու առասպելները պատմում են մարդկային գոյի առանձնահատկությունների, կյանքի ու մահվան, կռվի և ազատության, սիրո և դավաճանության, աշխարհաճանաչության, անցյալի ու ապագայի մասին: Փիլիսոփայական այդ մշակումներին առանձնահատուկ հմայք է տալիս Իսահակյանի ճոխ լեզուն, բանաստեղծական լիրիզմով հագեցած գեղեցիկ խոսքը: Ոչ պակաս կարևոր է նաև տարբեր ազգերի հայրենիքների աշխարհագրության իմացությունը կամ այլ կերպ՝ դրա կիրառությունը, ինչը ընթերցողին տեղափոխում է համապատասխան ժամանակ ու միջավայր:

ЖЕНЯ КАЛАНТАРЯН – *Аветик Исаакян и восточная культура* (к 150-летию со дня рождения Ав. Исаакяна). – В статье представлен глубокий интерес Исаакяна к восточной культуре. Еще в родном Казарапате Исаакян слушал беседы, сказки и песни ашуггов (народных певцов), которые оказали большое влияние на юношу и способствовали развитию его воображения. С одной стороны, романтические впечатления, полученные с детства, с другой стороны, воодушевление литературой восточных народов в годы пребывания в Европе под влиянием европейских философов (Ницше, Шопенгауэр, Кант и другие) и писателей (Гёте, Беранже, Дюма...) побуждают Исаакяна к обработке восточного фольклора. Однако Восток — это универсальное понятие, охватывающее национальный темперамент, религию, язык и философию разных наций и народов (индийцев, китайцев, японцев, египтян, персов, евреев...). В легендах, традициях и сказаниях, принадлежащих этим народам, Исаакян подчеркивает мировоззрение каждого народа, его нравы и обычаи. Исаакяну удастся выделить менталитет и поведение отдельных народов и сделать видимой непреходящую значимость мудрых идей, идущих из древнего мира.

Ключевые слова: культура, литература, философия, религия, легенда, сказка, предание, буддизм, зороастризм, мировоззрение

ZHENYA KALANTAPYAN – *Avetik Isahakyan and Oriental Culture* (On the 150th anniversary of Av. Isahakyan's birth). – The article presents Isahakyan's profound interest in Oriental culture. Already in his native Ghazarapat, Isahakyan had heard the conversations, tales, and songs of the ashughes (folk minstrels), which left a great impact on the young man and contributed to the development of his imagination. On one hand, the romantic impressions received from childhood, and on the other hand, the enthusiasm for the literature of Oriental

peoples during his years in Europe, influenced by European philosophers (Nietzsche, Schopenhauer, Kant, and others) and writers (Goethe, Béranger, Dumas...), drive Isahakyan toward the cultivation of Oriental folklore. However, the Orient is a universal concept that encompasses within itself the national amalgamation of different nations and peoples (Indian, Chinese, Persian, Japanese, Egyptian, Hebrew...), their language, religion, and philosophy. In the legends, traditions, and tales belonging to these peoples, Isahakyan emphasizes each people's worldview, customs, and traditions. Isahakyan succeeds in highlighting the mentality and behavior of individual peoples and making visible the enduring significance of wise ideas coming from the ancient world.

Key words: *culture, literature, philosophy, religion, legend, fairy tale, story, Buddhism, Zoroastrianism, worldview*

References

- Ինժիկյան Արամ, 1977. Avetik^h Isahakyan, Yerevan (in Armenian).
 Isahakyan Avetik^h, 1977. Hishatakan, Yerevan, “Sovetakan Gօրօք” հօրատ (in Armenian).
 Isahakyan Avetik^h, 1977. Yegkegi zhovovatօu, h. 5, “Sovetakan Gօրօք” հօրատ., Yerevan (in Armenian).
 Isahakyan Avetik^h, 1979. Yegkegi zhovovatօu, h. 6, “Sovetakan Gօրօք”, հօրատ., Yerevan (in Armenian).
 Isahakyan Avetik^h, 2001. Aforizmner. “Tigran Metօ” հօրատ., Yerevan (in Armenian).
 Isahakyan Avetik^h, 2014. Yegkegi liakatar zhovovatօu, h. 5, “Gitutօyun” հօրատ., Yerevan (in Armenian).
 Isahakyan Avik, 2000. Avetik^h Isahakyan gitakan kensagrutօyun, girօk^h 1, Yerevan (in Armenian).
 Isahakyan Vigen, 2011. Hayrօs, Yerevan, “Gaspօrint” հօրատ (in Armenian).
 Nazaryan Stepanos, 1851. Abul Kasem Feօdausi Tusskij, Tvoօretօ knigi tօagey izvestnoy pod nazvaniem Shax-Nameh, Moskva (in Russian).
 U. Sayid Eduard, 2025. Aօvelabanutօyun, Yerevan (in Armenian).

ԿՈՄԻՏԱՄՆ ԻՐ ՆԱՄԱԿՆԵՐԻ ՀԱՅԵԼԻՈՒՄ

ԵՎԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ 

ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյան անվան գրականության ինստիտուտ

Կոմպոզիտոր, երաժշտագետ, երաժիշտ-բանահավաք, մանկավարժ, հայ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Սողոմոն Սողոմոնյանը՝ Կոմիտասը, ազգային խորհրդանիշներից է, որի ճակատագիրը գրեթե նույնական է ընկալվում հայոց ճակատագրին: Բազմաթիվ են նրան նվիրված ուսումնասիրությունները, սակայն առեղծվածային իր կերպարով Կոմիտասը շարունակում է մնալ հայ և օտարազգի հետազոտողների ուշադրության կենտրոնում:

Սույն հոդվածում ամփոփվելու է վերլուծությամբ ներկայացվում են Կոմիտասի նամակների աշխարհայացքային ու հոգեբանական որոշակի տիրույթներ, դրանցում խտացված խորքային փիլիսոփայությունը, որտեղ վարդապետը բացահայտվում է իբրև իր միջավայրի ու երկրի զավակ, իբրև համաշխարհային ճանաչման հասած բացառիկ երաժիշտ և անհատականություն՝ իր մարդկային բարձրակիրը նկարագրով, ներաշխարհի մակընթացություններով, դրամատիկ ապրումներով: Հոդվածի նպատակն է՝ ա. Կոմիտասի բազմաշերտ նամակների ուսումնասիրությունը դիտարկել որպես անհատականության աշխարհայացքի ու ներաշխարհի բացահայտման բացառիկ գործիք, բ. մեր օրերի գեղարվեստական գիտակցության տեսանկյունից իմաստավորել նամակների հանգուցային հաղորդագրությունները, գ. բացահայտել միջմշակութային հաղորդակցության գործընթացը Կոմիտասի նամակների օրինակով՝ վեր հանելով դրանցում առկա ազգային ու համամարդկային գաղափարները:

Հետազոտության խնդիրներն են՝ ա. ուսումնասիրել և մեկնաբանել Կոմիտասի նամակներում համամարդկային և ազգային գաղափարների համընկնումների ծածկագրված նշանային տարածությունները, բ. քննել հայ մշակույթի, երաժշտարվես-

* **Եվա Մնացականյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի Թումանյանագիտության խմբի ղեկավար, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր

Ева Мнацаканян – доктор филологических наук, руководитель Туманяноведческой группы института литературы им. М. Абегиана НАН РА, проф. кафедры родного языка и методов его преподавания Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна

Yeva Mnatsakanyan – Doctor of Philological Sciences, The Head of the Tumanyan Studies Group of the Institute of Literature after. M. Abeghyan of the NAS of the RA, Associate Professor of the Department of Native Language and Methods of its Teaching of the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan

Էլ. փոստ՝ MnacakanyanEva@mail.ru <https://orcid.org/0000-0002-0508-4050>



This work is licensed under a Creative Commons Attribution-Non-Commercial 4.0 International License.

Ստացվել է՝ 29.09.2025

Գրախոսվել է՝ 06.10.2025

Հաստատվել է՝ 06.11.2025

© The Author(s) 2025

տի ինքնության ֆենոմենը համաշխարհային մշակութաբանության դաշտում: Նյութի քննությունն իրականացվել է պատմահամեմատական, նկարագրական և վերլուծական մեթոդներով:

Նամակների էջերում Կոմիտասի առեղծվածը մինչև վերջ չի բացահայտվում, սակայն բանաձևվում է մի ճշմարտություն. Կոմիտասը մաքրեց, նոտագրեց, ստեղծեց մեր երգի վսեմ հայրենիքը, որն իր անթերի ու պայծառ գոյությամբ անպայմանորեն մաս է կազմում հայոց պատմության մշտագո փիլիսոփայության:

Բանալի բառեր – Կոմիտաս, նամականի, հոգեբանության ու մտածողության բացահայտում, հույզերի խտացված տիրույթ, վավերագիր, աստվածատուր հանճար, համաշխարհային ճանաչում, հայ երգի կենդանի հանրագիտարան

Ներածություն

Նամակագրությունը՝ իբրև ակնարկային գրականության ժանրատեսակ, առանձնանում է խորքային, անկեղծ ու մտերմիկ բնույթով, որն անձնակա-նության շրջանակում մարդկային հույզերի, հոգեբանության ու մտածողու-թյան բացահայտման բացառիկ միջոց է: Անվերապահորեն կարելի է ասել, որ իր հոգեբանական, փիլիսոփայական, իմացաբանական տարողությամբ հայ և համաշխարհային նամակագրության պատմության մեջ բացառիկ տեղ են գրավում Կոմիտաս վարդապետի նամակները, որոնք նրա գրական ժառան-գության անփոխարինելի մասն են կազմում:

Վավերական փաստ է, որ դեռևս Կոմիտասի կենդանության օրոք ժողովր-դի հավաքական գիտակցությունը լիովին հասու էր նրա՝ ի վերուստ սահ-մանված առաքելության խորհրդին: Իր գործունեության ողջ ընթացքում բա-ցառիկ ծանր մաքառման ճանապարհով վարդապետը ձգտում էր բացահայ-տել հայի տեսակի, էթնոգենետիկ ինքնության եզակիությունը և նրա վկա-յագրման մեջ հասնել կատարելության: Ազգային ինքնության ճանաչողու-թյան ու հայապահպանության այս նպատակադիր ծրագրի ընթացքը առավե-լապես երևում է նրա նամակներում, որոնք պատմականորեն ստույգ, միա-ժամանակ խիստ անձնավորված վավերագրեր են:

Նրբագգաց ու տպավորվող, ծայրաստիճան ազնիվ ու ուղղամիտ՝ սրբա-լույս վարդապետը սուր զգացողությամբ էր վերապրում կենսական ամենա-սովորական դիպվածներն անգամ, որոնք հաճախ, զուտ անհատական զգա-ցումի, մասնավոր ապրումի նշանակությունից բեկվել-անջատվելով, իմացա-բանական լուրջ կշիռ են ձեռք բերում՝ մեկնաբանելով ժամանակը լույսի ու ստվերի ծայրաբևեռներում: Կոմիտասի նամակների ենթաշերտերում բացա-հայտվում են ոչ միայն Կոմիտաս - նամակի հասցեատեր անձնային փոխհա-րաբերությունները, այլև ժամանակի սոցիալ-հոգեբանական, հասարակա-կան, քաղաքական ու մշակութային շարժընթացների ողջ գունապնակը, գա-ղափարները, որոնք ուղղություն են տալիս նրա գործունեությանը: Նամակ-ների էջերում կենդանագրվում է հասարակության հոգեկերտվածքի ու բարո-

յական նկարագրի ճշգրիտ պատկերը: Կոմիտասի անձնական ապրումների, գրի մատյանը վերափոխվում է ճշմարիտ ու արժեքավոր վկայագրության:

Նամակը՝ Կոմիտասի հոգեբանության խտացված տիրույթ

Կոմիտասը նամակագրական կապ է ունեցել ժամանակի նշանավոր շատ մարդկանց, մի շարք մտավորականների ու հոգևորականների հետ: Նամակների տողերում, ինչպես արտասովոր մի հայելիում, արտացոլվում են հանճարեղ երգահանի, լայնահայաց ու ազնվագարմ մտավորականի կյանքի երբեմն անսահման գեղեցիկ, հաճախ՝ խիստ հակասական պահերն ու դրվագները: Դրանք պերճախոս վկայություններն են թե՛ վարդապետի մարդկային լուսավոր նկարագրի, թե՛ ստեղծագործող հանճարի գեղագիտական, քաղաքական հայացքների:

Նամակների էջերում Կոմիտասը թողնում է պատահիկներ իր հոգուց ու սրտից՝ ակնկալելով ջերմություն հարազատ ու մտերիմ մարդկանցից: Նամակագիրը ծայրահեղ անկեղծ է երկու տարածության մեջ՝ նախ՝ ինքն իր հետ, ապա՝ նամակի հասցեատիրոջ նկատմամբ:

Նամակների էջերում քնարական նուրբ ապրումներով, բացառիկ անկեղծությամբ նրբակիրթ մտավորականը ներկայանում է իր բազմափեղկված մտածողությամբ. յուրաքանչյուր փերթում ընթերցողը որսում, վերապրում է հոգեբանական զգայությունների նորանոր երանգներ, փիլիսոփայական հետաքրքիր խորհրդածություններ: Դրանք մերթ մոռալ ու տխուր են, հուսահատ ու հոռետեսական, մերթ ուրախ ու հաղթական, սրամիտ ու կարեկից: Տասնյակ նամակներում նա վերլուծության է ենթարկում ժամանակը, իր ապրումներն ու հոգեկան վիճակը: Աշխարհիմացության նրա ներքին զգացողությունը նամակների բազմամուղ հոսքերում ձևավորում է հոգեբանության ու մտածողության խտացված տիրույթներ, որոնցում Կոմիտասը բացահայտվում է որպես

ա) ժամանակի միջավայրի ու երկրի զավակ, խոնարհ վարդապետ՝ դառնալով հայոց ֆիզիկական ու հոգևոր ճակատագրի կրողը,

բ) բացառիկ երաժիշտ, որն ահռելի ջանքերի ու աշխատասիրության, աստվածատուր հանճարի շնորհիվ հասնում է համաշխարհային ճանաչման ու ինքնաբավ կանգնում այլ ազգերի կողքին՝ օտար ափերում կերտելով հայ ժողովրդի հոգևոր հանճարի անձեռակերտ պատմությունը,

գ) անհատականություն՝ մարդկային բարձրակիրթ ներաշխարհով, հոգեբանական ազնվագարմ նկարագրով, իր ծագումնաբանության գիտակցությամբ, շատ հաճախ՝ հոգու մակընթացություններով, միտքը պաշարող անկումային տրամադրությամբ, օտարումի դրամատիկ ապրումներով:

Ինքնաբացահայտման այս ճանապարհին երևում է բացառիկ բարձր ու նրբազգաց մի անհատականություն, որն ապրում ու կրում է իր ժողովրդի պատմական ճակատագրի բոլոր հարվածները՝ նրան համակած ողբերգությո-

յան ու կործանումի դրամատիկ սարսափի մեջ անելով հնարավորն ու անհնարինը՝ կենդանի պահելու հայոց կենսատու երակը:

Մշակույթը, կրթությունը, արվեստը, որ միշտ եղել են ազգի ինքնացման բացարձակ հիմունքը, վերածվում են գոյաբանական սուբստանցի, որով կայունանում է ազգային կյանքի ներդաշնակությունը, իմաստավորվում նրա գոյությունը համաշխարհային պատմության ընթացքներում: Դրանք առավել կարևոր են փոքր ժողովուրդների ազգային նկարագրի, ինքնության պահպանման, բազմակողմանի զարգացման համար:

Ցանկացած արվեստի բուն էությունը ազգային կյանքն է, գլխավոր հերոսը՝ հայրենիքը՝ բազմաբովանդակ դրսևորումներով: Այս անբեկանելի համոզումն ուներ Կոմիտասը: Նրա համար հոգևոր հայրենաստեղծումի ու հայրենափրկության ռահվիրան Աբովյանն էր, որի սերն առ հայրենիք, զգացմունքների ու նվիրաբերումի անկեղծությունը ցոլանում էր հոգու ու մարմնի բոլոր բջիջներում, արձանագրվում գրի բոլոր պարունակներում: Իր հոգևոր ուսուցչի՝ Ն. Աբովյանի պես Կոմիտասն էլ ուներ մի բարձրագույն նպատակ. «Աշխատիլ, տքնիլ, պայքարիլ՝ միայն եւ միայն ժողովուրդիս եւ մարդկութեան համար...»¹: Աբովյանը խորհրդանիշ էր, սրբազան հանձար, որի մշտական ներկայությունը անընդհատ հիշեցնում էր Կոմիտասին ի վերուստ իրեն տրված առաքելությունը՝ «յաւեստ մնալ հայ ժողովրդի ճշմարիտ զաւակ»²: Կոմիտասը հենց այս սուր զգացողությամբ առաջադրում է խնդիրներ, որոնց փիլիսոփայական հանրագումարը հայոց ազգային, հոգևոր երգ-երաժշտության նախակերտ երակի հայտնաբերումն էր, երաժշտական մշակույթի բարձրագույն որակի ստեղծումը, հայոց ազգային ու գենետիկ ինքնության վկայումը:

Ազգային երաժշտությունն իբրև հայ ժողովրդի ինքնություն մտածողության կենսական զարկերակ

Կոմիտասը հատկապես ժողովրդական երգերում էր տեսնում հայ հանձարի սրբազան գեղեցկությունը, ազգի բնատուր հանձարը³ և բացառիկ բծախնդրությամբ էր մոտենում յուրաքանչյուր երգի, երաժշտական պատառիկի մշակմանը. դա նրա ստեղծագործական տարերքի աստվածատուր ու անիմանալի խորհուրդն էր մշտապես: Բոլոր գրվածքները, ըստ նրա, պետք է անցնեին ոչ թե անհատական, այլ ազգային-պատմական նշանային իրողությունների, ազգային դարավոր արժեքների առանձնահատուկ նկարագրի չափման գործընթացով: «Իւրաքանչիւր ազգի երաժշտութիւնը բոլորում է իր

¹ Կոմիտաս վարդապետ (1869-1935), Եր., Սարգիս Խաչենց. Փրինթինֆո, 2009, էջ 17:

² Նույն տեղում:

³ «Ժողովրդական երաժշտությունը Կոմիտասը համարել է ընդհանուր ազգային կուլտուրայի մի մասը,- գրում է Ի. Յոլյանը,- որի մեջ, ինչպես և գրականության ու արվեստի մյուս ձևերում, արտացոլվում են տվյալ ժողովրդի բնորոշ գծերն ու առանձնահատկությունները» («Կոմիտաս», Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 89):

մայրենի լեզուի չորս անբաժան յատկություններից՝ ամանակ, ելեւեջ, հնչյուն եւ ոգի. սոքա են պատկերացնում մտքի եւ զգացմունքի աշխարհները»⁴, - գրում է նա 1910 թ. հունվարի 12-ին Մատթեոս Իզմիրլյանին ուղղված նամակում:

Ազգային երաժշտությունը իբրև կենսական զարկերակ զգացող վարդապետը մաքրամաքուր երաժշտության պահանջ էր դնում ոչ միայն ժողովրդական, այլև հոգևոր երգերի հարցում: Պատարագի ժամանակ մատուցվող երգերի օտարամուտ ու խորթ տարրերն ամայացնում ու կործանում են հայ հոգևոր երաժշտությունը: Մի շարք նամակներում լսվում է Կոմիտասի հոգու ճիշը, արտազեղվում են զգացմունքները «տգետ, մոխրացած եղանակների» դեմ, որոնցում բացակայում է մայրենի լեզվի, հոգու, մտքի ներդաշնակ գոյակցությունը: Կոմիտասը մատնանշում է անաղարտ մնացած աղբյուրները՝ շարականներ, հայ շինականի երգեր, որոնցում ապրում են ջերմեռանդ հավատքի նախասկզբնականությունը, նախնիների զգայուն, կենդանի ու վեհ ոգին⁵: Պահանջներն ինքնանպատակ չեն. երաժշտությունը, ըստ նրա, կոչված է «սրբագործելու ազգային սիրտը», «կրթելու ու ազնվացնելու» այն: Վարդապետը Մատթեոս Բ. կաթողիկոսին ուղղված մի շարք նամակներում գործնական առաջարկություններ է անում, հայ հոգևոր երաժշտության զարգացման, մաքրագործման համար մանրակրկիտ ու լուրջ ծրագիր ներկայացնում: «Կոմիտասը, հանդես գալով հայ եկեղեցական երաժշտության ազգային ինքնատիպության գորեղ պաշտպանի դերում, - գրում է կոմիտասագետ Ռ. Աթայանը, - նախ քոյրեղացրեց այդ երաժշտության անարատ կատարման ոճը»⁶:

Իր ամենամտերիմ մարդկանցից մեկին՝ Մ. Բաբայանին,⁷ ուղղված նամակներից մեկում Կոմիտասը բացահայտում է ստեղծագործական ընթացքի հնարավոր ու անխուսափելի թերությունների պատճառներից էականները: Մարդը կորցնում է քննական սթափ հայացքը, երբ երկար ժամանակ զբաղ-

⁴ «Կոմիտաս. Նամակներ», Եր., ԳԱԹ հրատ., 2007, էջ 78:

⁵ Կոմիտասը, ինչպես հիշում է Տիգրան Զիթունին, տարիների երազանք ուներ՝ կազմել հայ երաժշտության ծագման պատմությունը: Հաճախ խոստովանում էր, որ իր մտածմունքի առանցքը հայ երաժշտական խաղերի անհայտ մնացած գաղտնիքը լուծելն ու նրա բանալին գտնելն է և բուն հայ երաժշտական գեղարվեստը ստեղծելը: «Այս ժողովուրդը երգ ունի, - ասում է Կոմիտասը: - Եվ այդ երգին ուժը բոլոր մեծ ազգերու ունեցածեն նույնիսկ գերազանց է, որովհետև կրկի ուղղակի ժողովուրդի սրտեն ու դարերու երակներեն...» («Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում», Եր., Սարգիս Խաչենց. Փրինթինգթոն, 2009, էջ 281):

⁶ Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 7, Եր., Անահիտ, 1997, էջ 121:

⁷ Հայ դաշնակահարուհի, երգչուհի, երաժշտագետ, մանկավարժ Մարգարիտ Բաբայանը (1874-1968) եղել է Կոմիտասի մտերիմներից: Նրա հետ ծանոթացել է 1895 թվականին, դարձել մերձավոր բարեկամը, 1906 և 1914 թվականներին Փարիզում մասնակցել է նրա համերգներին: Եռանդուն աջակցել է կոմիտասյան խնամատար հանձնաժողովին: Հավաքել է Կոմիտասի ձեռագրերը, հրատարակել որոշ գործեր, նրա մասին գրել հոդվածաշար: Նրա հետ հանդես է եկել համերգ-դասախոսություններով:

վում է միևնույն բանով. հափշտակության նուրբ քողը թաքցնում է հնարավոր վրիպումները: Սակայն ճշմարիտ արվեստագետին հատուկ բնական մղումը՝ ձգտել ու հասնել կատարելության, ստիպում է նրան ի վերջո հասնել կամ գոնե ձգտել առավելագույն հնարավորին: «Ես կատարեալ չեմ, ինչպես բոլոր մարդիկ,- գրում է Կոմիտասը,- բայց՝ կատարելութեան ձգտող, նոյնիսկ այն դեպքում, երբ ես մերժում <եմ> մեկի կարծիքը. թէեւ մերժում եմ առժամանակ, բայց այդ ինձ մտածել է տալիս, թէ ինչո՞ւ այս կամ այն կտորը դուր չէ եկել մեկին կամ միւսին, եւ ես աշխատում եմ հարցը լուծել»⁸:

Ուշադիր ու սթափ միտքը, ինքնամեծարման մոլուցքի ու հավակնոտության բացակայությունը անընդհատ ստիպում են Կոմիտասին ամեն հնչյունի, ձայնի ու երգի տաղաչափության մեջ փնտրել միայն հայկականը, մաքուրն ու անաղարտը, որտեղ խորապես դրոշմված են «մեր ժողովրդի ամբողջ սիրտն ու հոգին, ներքին ու արտաքին կեանքը»⁹: «Կոմիտաս Վարդապետի առաքելությունը,- գրում է կոմիտասագետ Լ. Մահակյանը,- հայ դարավոր երաժշտական մշակույթի վերածնունդն էր, ազգային կոմպոզիտորական դպրոցի ձևավորումը, հայ ազգային ինքնություն երաժշտական մտածողության ու սկզբունքների վերհանումը, բարձրագույն ուսումնական հաստատության՝ կոնսերվատորիայի ստեղծումը»¹⁰:

Հայ երգը համաշխարհային մշակույթի զարգացման գորավիզ

Գործի բերումով (ուսումնառություն, դասախոսություններ, համերգներ) ժամանակ առ ժամանակ օտար ավերում հանգրվանող վարդապետը շարունակում է իր առաքելությունը՝ հայի, հայության ու հայրենաստեղծության գործը՝ հրնթացս հմայելով ողջ Եվրոպան: Համերգների ու դասախոսությունների մասին պատմող նամակներում երևում է մերթ անհանգիստ, մերթ ինքնաբավ հայ արվեստագետը, որ նվաճել է աշխարհն ու անթաքույց հպարտությամբ կանգնել աշխարհի առաջադեմ ազգերի կողքին: «Ես այժմ երգերի տպագրութեամբ եմ զբաղուած,- գրում է նա 1907 թ. Բեռլինից,- եւ շարունակ նորանոր դիտողութիւններ եմ անում. այնպէս, որ երբ գործը վերջանայ շատ հետաքրքրական է լինելու, թէ ինչպէս, մեր ժողովրդի ամբողջ սիրտն ու հոգին, ներքին ու արտաքին կեանքը խորապէս դրոշմուած է ձայների եւ տաղաչափութեան մէջ»¹¹:

Կոմիտասն իր հանճարի անըստցյուտ ուժով հայտնաբերել էր տիեզերական ամենահաղորդ մի լեզու, ազնիվ ու ինքնություն մի ոճ, որ խորապէս հայկական արմատներ ուներ: Երաժշտագետ, պրոֆեսոր Ռիխարդ Շմիդտը խոս-

⁸ «Կոմիտաս. Նամակներ», 2007, էջ 32:

⁹ Նույն տեղում, էջ 30:

¹⁰ **Մահակյան Լ.**, Դիտարկումներ Կոմիտաս վարդապետ և Հայ առաքելական եկեղեցի առնչությունների շուրջ // Պատմաբանասիրական հանդես, հմ. 3, Եր., 2021, էջ 125:

¹¹ «Կոմիտաս. Նամակներ», էջ 30:

տովանում է դրա նորահայտությունը եվրոպական երաժշտության մեջ: Կ. Կոստանյանին ուղղված նամակում Կոմիտասը գրում է. «...Քանի խորունկն եմ մտնում երաժշտական ծիծաղածին ծովի մեջ, նոյնքան պնդում եմ համոզմունքս, թե՛ մեր եւ ժողովրդական եւ եկեղեցական անմահ ու վեհ եղանակները, որոնք քոյր եղբայր են շատ վաղուց, ապագայում նոյնպես օտարների համար ուսումնասիրության աղբիւր պետք է դառնայ. որովհետեւ արմատը շատ խոր հնութիւն է տանում հասցնում, մինչեւ Հայի ծագումը, ա՛յնտեղ, նորանից անբաժան, ծլում եւ նորա՛ հետ է մեզ հասնում: Ուսուցչապետս միշտ կրկնում է. Դուք ստեղծել էք երաժշտական ազնիւ եւ ինքնուրոյն ոճ, որ կարմիր գծի պէս ձեր ամբողջ գրութեանքների եւ շարադրութեանց մէջ պայծառ անց է կենում. այդ ոճը եւ անուանում եմ Հայական ոճ, ասում եմ, որովհետեւ մեր երաժշտական ծանօթ աշխարհի համար նորութիւն է»¹²:

Համերգներին, դասախոսություններին զուգահեռ նա հոգ էր տանում իր կազմած տետրակները ֆրանսերեն, գերմաներեն թարգմանելու մասին. պետք էր օտարներին ծանոթացնել, ցույց տալ, որ «որ մենք կենսունակ ենք, լուսոյ որդեգիր ու կարապետ ենք խաւար վայրերում, շինարար ենք...»¹³:

Ազգային պատվախնդրությամբ անընդմեջ հիշեցնում էր յուրայիններին ու օտարներին, որ հայը, չնայած իր դառը ճակատագրին, աննկուն բան ունի իր մեջ, անմար մի հույս դեպի ապագան, դեպի կրթություն ու գիտություն: Ա. Չոպանյանին գրած նամակներում գերիշխող գաղափարն այն էր, որ համաշխարհային ասպարեզ հայը դուրս է գալիս ոչ թե իբրև ողորմություն հայցող մեկը, այլ «իբր մարդկային զարգացման զօրավիզն ազգ»¹⁴:

Որպես ազգային բարձր արժեքների բացառիկ կրող՝ Կոմիտասը մշակութային ու մշակութաբանական ցանկացած խնդրի մոտենում է էթնիկական բարձր արժանապատվությամբ: Հայի հանճարը զինաթափ կարող է անել բոլորին: Եվ անում էր՝ շնորհիվ հանճարեղ երգահանի: Միջազգային երաժշտական ընկերության Բեռլինի մասնաճյուղի քարտուղար և Արքունական համալսարանի երաժշտության պատմության ուսուցչապետ Մաքս Չայֆերտը 1899 թ. հուլիսի 19-ի նամակում խոստովանում է. «Դուք մեզ մոտիկից ծանոթացրիք մեզնից այնքան հեռու գտնվող Ձեր հայրենիքի բարձր զարգացման հասած քաղաքակրթությանը: Մեզ զարմացրիք Ձեր չգերազանցված վարպետությամբ, ինչպես Ձեր կարդացած դասախոսություններով, այնպես էլ Ձեր կատարած երգերով, որոնք երբեք չեն կարող խունանալ Ձեր ունկնդիրների հիշողության մեջ: Ձեր դասախոսություններով ու երգերով Դուք վաստակեցիք ոչ միայն մեր մասնաճյուղի հիացմունքը, այլև Ձեր հայրենիքի քաղաքակրթության արժանի գնահատականը»¹⁵: Ուշագրավ փաստ է. օտարների

¹² «Ամենայն հայոց երգի վեհափառը. Կոմիտաս վարդապետ», Եր., 2019, էջ 99:

¹³ «Կոմիտաս. Նամակներ», էջ 184:

¹⁴ Նույն տեղում, էջ 189:

¹⁵ **Բաղիկյան Խ.**, Կոմիտասը՝ ինչպիսին եղել է, Եր., «Զանգակ» հրատ., 2013, էջ 83-84:

մեծարանքը Կոմիտասն ընդունում և ընկալում է իբրև հայ ժողովրդի հոգևոր հանճարի գնահատման փաստեր. «...քանիցս հրափրուել եմ իրենց մօտ մեծարանքի. բոլորն էլ հիացած են մեր գեղարուեստէն, եւ այն եկեղեցին, ուր կերթամ երգելու, միշտ օտարներով կհետաքրքրին»¹⁶:

Կոմիտասը, անթաքույց հպարտությամբ խոսելով հայի հզորագույն ստեղծագործ մտքի մասին, Մարգարիտ Բաբայանին գրում է. «Մեր մտքի ու սրտի զենքն ա՛յնքան թափանցիկ, ա՛յնքան կենսունակ է, որ օտար մտքերն ու սրտերը ուզե՛ն չուզե՛ն՝ պիտի գերեն. ահա՛ կենդանի է զենքը, որի զինուորն եմ ե՛ւ ես, ե՛ւ դու, ե՛ւ բոլոր նոքա, որոնք իրենց ցեղի ազնիւ միտքն ու սիրտն են հրապարակ հանում և այնտ՛եւ շարժում սառն քաղաքագետի պաղ սիրտը՝ մի փոքր էլ մեր կենսունակ եւ մարդկութեան պիտանի ժողովրդին ու ազգին նայելու, խնայելու եւ նորա մասին մտածելու»¹⁷:

Կոմիտասի՝ նամակներում ուրվագծվող գաղափարները

Կոմիտասի ներաշխարհը, գործունեության հայրենասիրական երակը մշտապես տրոփում էին հայ ժողովրդի ճակատագրով: Նրա անհատականության նկարագրին մշտապես հատուկ է եղել տիեզերական այն թախիծն ու տառապանքը, որ ապրում էր իր ժողովրդին բաժին հասած ծանրագույն ճակատագրի ու օրեցօր ավելի մղձավանջային դարձող ողբերգությունների համար: 1909 թ. ապրիլի 15-ին Ա. Չոպանյանին գրած նամակում վարդապետը, հետահայաց ձայնակցելով մեծ մտածողին, ողբում է. «Տես աչքովդ, թե ինչպես մարդիկ աւերում, կործանում են պատիւ, անուն, եկեղեցի, սրբութիւն, ազգայնութիւն եւ ինչպես գործիք են դառնում չարի ձեռին, եւ ապա մի՛ լցուիր, մի՛ լար, մի՛ ողբա Խորենացու պէս, իր իսկ ողբով. այժմ նոյն պատկերն է մեր շուրջը, եւ նորա ուրուականն է ողբում մեր անբուժելի ցաւերը»¹⁸: Չոպանյանին ուղղված նամակներում ուրվագծվում են Կոմիտասի գաղափարական, ազգային ու քաղաքական ընկալումները:

Շատ են նամակները, որոնցում զարմանալի կանխազգացումով ընդգծվում է ճշմարտությունը, որ գրեթե անհնար է դառնում շրջանցել միջավայրի, կենսական պայմանների ազդեցությունը մարդկային հոգեվիճակի վրա:

Ինքնատիրապետմանն ուղղված նրա ջանքերը երբեմն տեղի են տալիս. մղձավանջային իրականության մեջ օր առ օր խտացող ճնշումներն ու թշնամանքը սկսում են ավելի ու ավելի ճեղքել նրա ներդաշնակ հուզաշխարհը:

Նամակները անմիջականորեն բացում են Կոմիտասի մտածումների ու հույզերի աշխարհը՝ մերթ թախծոտ ու ավեկոծված, մերթ ուրախ, ոգևորությամբ ու հույսով լի: 1906 թ. Մ. Բաբայանին Բեռլինից ուղղված նամակում գերիշխում է անկումային տրամադրությունը՝ հուսահատ ճիգեր՝ ծանր կենսա-

¹⁶ «Կոմիտաս. Նամակներ», էջ 52:

¹⁷ Նույն տեղում, էջ 53:

¹⁸ Նույն տեղում, էջ 176:

պայմաններում ապրելու և գործելու, անտրտունջ ու խոնարհ ծառայություն, փոխարենը՝ մարդկային դառն անտարբերություն... «Սիրտս կտոր-կտոր է լինում, չեմ իմանում ինչպե՞ս հովանամ»¹⁹, - գրում է Կոմիտասը:

Գաղտնիք չէ, որ գրեթե բոլոր ժամանակներում են հանճարեղ գաղափարները բխվել խավարամիտների թշնամանքին: Կոմիտասը բացառություն չէր: Իզուր էր վարդապետը տրտնջում, թե գոնե «մի այնպիսի չար բան արած լինե՞ր, որ անպատուաբեր լինե՞ր» իր կոչմանը: Միջավայրն աղարտողներ «վատահոգի» մարդիկ չարախոսելու և զրպարտելու համար առիթ և պատճառներ չեն փնտրում. չարությունը նրանց էատարբն է, կենսահիյոթը: «Թէեւ ներսս բոլորովին մաքուր եւ ջինջ է,- գրում է Կոմիտասը,- ինչպէս յստակ ու պայծառ վտակ, բայց չար մարդիկ քար են ձգում ու պղտորում»²⁰:

Մեկ այլ նամակում տեսնում ենք մշտապես ստեղծագործական թոփչքի մեջ գտնվող մարդուն, որի սլացքը կասեցվում է այդ ժամանակվա եկեղեցական - կրոնական միջավայրի հեղձուցիչ, պահպանողական մթնոլորտում: 1909 թ. սեպտեմբերի 5-ին Կաթողիկոսին գրած նամակում պարզապես դառնացած գրում է. «Քսան տարի է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան եմ: Մտել եմ այս հաստատութեանը ծառայելու նպատակով: Քսան տարուան ընթացքում շրջապատն ինձ թոյլ չէ տուել այն անելու, ինչ կարող էի, որովհետեւ տեսայ միայն որոգայթ եւ ոչ արդարութիւն: Նեարդերս թուլացել են, այլեւս տոկալու ճար ու հնար չունեմ: Որոնում եմ հանգիստ, չեմ գտնում. ծարաւի եմ ազնիւ աշխատանքի, խանգարում եմ, փափագում եմ հեռու մնալ, խցել ալկանջներս՝ չլսելու համար, զոցել աչքերս՝ չտեսնելու համար, կապել ոտքերս՝ չզայթակդուելու համար, սանձել զգացումներս՝ չլրդովուելու համար, բայց զի՛ մարդ եմ, չեմ կարողանում: Խիղճս մեռնում է, եռանդս պաղում է, կեանքս մաշում է, եւ միայն վարանանքն է բուն դնում հոգուս ու սրտիս խորքում»²¹: Վարդապետը գիտակցում է. զբաղվելով սիրած գործով, գրի առնելով իր ուսումնասիրությունների պտուղները՝ ավելի մեծ օգուտ կարող է բերել հայ եկեղեցուն²² և գիտությանը:

Հաջորդ պահին, սակայն, սովորական մահկանացուն բնորոշ հոռետեսությունը տեղի է տալիս, նահանջում: Կոմիտասի հանճարեղ անհատականությունը չէր կարող պարփակվել մանրախնդիր իրականության կամ անձնապարար եսականության շրջանակներում. մտքի թոփչքը հատում էր տիեզերական անսահմանությունը, սրտի տրոփյունները՝ մշտապես ձուլվում կախարդական երաժշտության հոգեպարար հնչյուններին:

¹⁹ «Մշակոյթ», թիվ 3-4, Փարիզ, 1935, էջ 155:

²⁰ Նույն տեղում, էջ 157:

²¹ «Մշակոյթ», նշվ. համարը, էջ 74-75:

²² Եկեղեցի-Կոմիտաս փոխհարաբերությունների մասին տե՛ս **Լ. Սահակյան**, նշվ. աշխ., էջ 121-133:

Իրապես, անմեկնելի է Կոմիտասի հուզաշխարհը: Մ. Բաբայանին ուղղված նամակներում երբեմն երևում էր մանուկ Սողոմոնը՝ մանկական թոթովախոս լեզվով²³: Ի՞նչն էր ստիպում նրան երեխայի հանգույն խոսելու, մանկան նման ասելու այն, ինչ մտածում է: Որ Կոմիտասն իր կյանքում հաճախ էր հանդես բերում մանկան սրամտություն, պարզություն ու մաքրություն, գաղտիք չէ. այդպիսին են հիշում նրան ճեմարանի սաները: «Պաշտելու չափ կսիրեինք մեր Հայր Սուրբը մոտիկ ազգականի նման, - գրում է Մեսրոպը Մարանջանը, - այնքան դուրահաղորդ էր, մտերիմ և տաք սրտոտ: Մանուկներուս հետ արտասովոր բարեկամություն ուներ: Չէ՞ որ ինքն ալ մանուկ էր հոգվով, պարզունակ, մաքուր բյուրեղ հոգվով և անմիջական... Ջվարթ, կատակախոս, ընկերական, չարաճճի...»²⁴:

Բայց ենթագիտակցության հեռունեքում էր թաքնված երբեմն մանկություն վերադառնալու հոգեբանական մղումը: Ենթագիտակցությամբ էր Կոմիտասն աշխարհին ու մարդկանց նայում պարզ ու մաքուր, անխարդախ, անդերսենյան մանկան աչքերով և տեսնում, բարձրաձայնում շրջապատի ողջ մերկությունը: Տեսնում էր ու գրում մերթ դառնացած, մերթ էլ զվարճալի ոճով: Անդրադառնալով այդօրինակ նամակներին՝ Մ. Բաբայանը գրում է. «Թո՛ղ ընթերցողը դատե, թե ի՞նչ զգայուն, քնքոյշ հոգի ուներ Վարդապետը, որչափ դիրուծեամբ կարող էր տանջուիլ եւ ինքն իրեն չարչարել, միւս կողմից ի՞նչ մանկական գուարթություն ուներ իր մէջ եւ մոռացութեան մատնել զինքը տանջող զգացմունքները»²⁵:

Նամակներում, սակայն, որքան էլ բացահայտվում է Կոմիտաս վարդապետի անհատականությունը, հուզաշխարհը, միևնույնն է, դրանց հայելիում ինչ-որ բան մնում է առկախ. կոմիտասյան զարմանահրաշ աշխարհը մինչև վերջ չի մեկնաբանվում՝ մշտապես ստեղծելով սպասման հոգեվիճակ, սպասում, որն այդպես էլ չի հասնում իր հանգրվանին: Կոմիտասը հաճախ է նամակներում գրում, թե այս կամ այն հարցի վերաբերյալ մանրամասներ կհայտնի հանդիպելիս. որոշ հարցերի շուրջ վարդապետը գերադասում է լռել, որոշ դեպքերում էլ նախընտրում է դեմառդեմ հանդիպումն ու գրույցը: Մարդկային հույզերի ողջ ներկայանակը երբեմն թուղթն անգոր է լինում վկայագրել:

Նամակների հայելու մեջ կոմիտասյան կյանքի մակընթացությունները, վերելքներն ու վայրէջքները երևում են մինչև 1915 թվականը:

²³ Կոմիտասի նամակները ուշադրության արժանի են մի քանի տեսանկյունից. Դարձվածքներով, առած-ասացվածքներով հարուստ ու գեղեցիկ լեզուն, ինքնատիպ ոճը ուսումնասիրության լայն ասպարեզ կարող են բացել լեզվաբան ոճագետների համար: Ոչ պակաս ուշագրավ են այն գծանկարները, որոնք հաջորդում են նամակներին:

²⁴ «Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում», էջ 60:

²⁵ «Մշակոյթ», նշվ. համարը, 1935, էջ 156:

Մղձավանջային այս շրջանում ճշացող լռությունն է դառնում տիրապետող. «Բազմակետեր են այստեղ, ամենքին հայտնի տխուր բազմակետեր, որի մեջ հանգչում է հայ երաժշտության մեծ ստեղծագործողի դժբախտ կյանքը»²⁶: Վարդապետի ազնիվ տքնանքը դադարում է. ի տես ողջ աշխարհի մեռնում է ազգը: Հանճարի ներաշխարհը վերածվում է դատարկ անոթի, ոչնչանում է հոգին: Եվ ինչ տարբերություն պատասխանին այն բազմաչարչար հարցի՝ խելագրավե՞լ է նա իրականում, թե՞ ոչ:

Մի բան հաստատ էր ու անքննելի. նրա և աշխարհի միջև ուղեփակոցի պես բարձրացել էր մի պատնեշ, որն այլևս անխորտակելի էր: Վարդապետը յուրաքանչյուր պահի վերապրում է սեփական մարմնի և հոգու հոշոտումը. նրա ներսում երգը լռել էր մեկընդմիշտ²⁷: «Կոմիտասի հոգեկան ցնցումը անձնական ողբերգություններից շատ ավելի խոր, համազգային գոյի և չգոյի ողբերգություն էր»²⁸, - գրում է Յ. Բրուսյանը:

Տասնամյակներ են անցել, Կոմիտաս առեղծվածը մինչև վերջ չի բացահայտվել: Նրա գոհաբերության իսկական ծեսի միջով անցած սրբոց կերպարը մնացել է անմեկնելի. Փարիզի հայոց հովիվ Քիպարյանին ուղղած հարցը՝ «Ասա տեսնեմ, անմա հ է այն գործը, որի համար ես մեռա», բացում, միաժամանակ փակում է բացառիկ հանճարին հասկանալու հնարավորությունը: «Այս մի ճիշ-նախադասությունը, - գրում է Յ. Բրուսյանը, - իր մեջ խտացնում է նրա ողջ կյանքի ու էության և՛ պայծառատեսությունը, և՛ ողբերգությունը... Հանճարի վարքագծի ու ստեղծված իրադրության հարցականը դեռ կմնա ժամանակի և տարածության երկնականմարում կախված»²⁹:

Միանգամայն ճիշտ է բանաստեղծը. «Ժողովուրդն է ստեղծում նրանց՝ ի մի հավաքելով իր ամբողջ ցանուցիի բազմանիստությունը, բայց հենց որ ծնեց՝ ինքը ժողովուրդն էլ լուսավորվում է այդ բազմանիստի ներքին ճառագումից: Այս վերառումով էլ՝ ոչ միայն ժողովուրդն է նրանց ծնում, այլև նրանք են ժողովուրդ վերածնում»³⁰: Պատահական չէ նաև, որ կոմիտասագիտության

²⁶ Բրուսյան Յ., Կոմիտաս, Եր., «Հայաստան» հրատ., 1969, էջ 78:

²⁷ 1915 թ. ապրիլի 11-ին ձերբակալված 300 մտավորականների շարքում էր նաև Կոմիտասը, որ կարճ ժամանակ անց հրաշքով վերադառնում է: Սակայն... նախկին Կոմիտասը այլևս չկար: Տիգրան Չիթունիսի հիշում է. «Էջմիածնի ու Պոլսո, տունի-դուրսի, համերգներու, հանդեսներու՝ ամենուս գիտցած շէն և Կոմիտասը չկար այլևս: Բան մը խորունկէն փա՛ծ էր անոր մեջ...»:

Կոմիտասի աչքից չէր հեռանում այդ օրերին տեսած ցնցող մի տեսարան. մի առավոտ աքսորի ճանապարհին հազարավոր հալածյալ հայեր արևի շողերի հետ մի մարդու նման ծունկի են գալիս և ձեռքերը երկիւնք կարկառած, արտավալից աչքերով ասում. «Առավոտ լուսո, / Արեգակն արդար, / Առ իս լո՛ւս ծագա»:

«Ու այդ չեղծված պատկերը, օրեօր, համրաբար, կրծեց, փորեց, եղծեց Կոմիտասի բանական տաճարն ու խորանը...» («Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում», էջ 287-288):

²⁸ Բրուսյան Յ., Կոմիտաս հայոց փարոսը, Եր., Հայաստան հրատ., 2009, էջ 20:

²⁹ Նույն տեղում, էջ 31:

³⁰ Մնակ Պ., Երկերի ժողովածու, հ. 5, Եր., «Հայաստան» հրատ., 1974, էջ 137:

մեջ այսպես է բանաձևվում վարդապետի պատմական ու ազգային առաքելությունը. «Կոմիտասն իր մեջ մարմնավորում է հայ երաժշտական կուլտուրայի տարեգրությունը: Նա իր ողջ էությամբ մի կենդանի հանրագիտարան է, որից դեռ շատ սերունդներ են օգտվելու»³¹:

Կոմիտասն ստեղծեց մեր երգի վսեմ հայրենիքը, որն իր անթերի ու պայծառ գոյությամբ ապահովելու է նորանոր սերունդների հավերժական ընթացքը՝ ոգեղեն ու ֆիզիկական:

Անէացա՛ծ, սրբացած՝

Կապրի ոգիդ հմայող՝

Դարձած ելնո՛ղ երգի ձայն-

Եվ հայրենի՛ դարձած հող...³²

Եզրակացություն

– Կոմիտասի նամակները պատմականորեն ստույգ անձնական ապրումների ու բազմատարր զգացմունքների վավերագրեր են, որոնք, հաճախ մասնավոր ապրումի նշանակությունից բեկվել-անջատվելով, իմացաբանական լուրջ կշիռ են ձեռք բերում՝ մեկնելով տարածաժամանակային տիրույթը լույսի ու ստվերի ծայրաբևեռներում:

– Կոմիտասի նամակների գաղափարական ենթաշերտերում բացահայտվում են ոչ միայն Կոմիտաս - նամակի հասցեատեր փոխհարաբերությունները, այլև ժամանակի հասարակական, քաղաքական, մշակութային շարժընթացների ողջ ներկայակայությունը: Նամակների էջերում կենդանագրվում է հասարակության հոգեկերտվածքի ու բարոյական նկարագրի ճշգրիտ պատկերը: Վարդապետի անձնական ապրումների, գրի մատյանը վերափոխվում է ճշմարիտ ու արժեքավոր անանձնական վավերագրության:

– Նամակների էջերում Կոմիտասն է՝ բաց ու անկեղծ, բայց և առեղծվածային, մինչև վերջ չբացահայտված իր աշխարհայեցությամբ ու հոգեբանական նրբերանգներով, մտածողության ազնվաշերտ դրսևորումներով, որոնց ուսումնասիրությունը թույլ է տալիս բանաձևելու անքննելի մի ճշմարտություն. Կոմիտասն ստեղծեց հայ ժողովրդի երգի վսեմ հայրենիքը, որն իր մշտահմա գոյությամբ հաստատուն տեղ է ունենալու ոչ միայն հայ ժողովրդի, այլև համաշխարհային մշակույթի պատմության մեջ:

ЕВА МНАЦАКАНЯН – Комитас в зеркале своих писем. – Композитор, музыковед, музыкант и собиратель устного народного творчества, педагог, основатель армянской композиторской школы Согомон Согомонян - Комитас - является одним из национальных символов, судьба которого воспринимается как судьба армянского народа. Ему

³¹ **Քասաթարյան Ս.**, Կոմիտաս. կյանքը, գործունեությունը, ստեղծագործությունը, Եր., «Հայպետհրատ», 1961, էջ 9:

³² **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու, հ. 3, Եր., «Սովետական գրող» հրատ., 1987, էջ 30:

посвящено множество исследований, однако загадочный образ Комитаса продолжает оставаться в центре внимания армянских и зарубежных исследователей.

В статье кратко проанализированы отдельные мировоззренческие и психологические аспекты писем Комитаса, представлена отраженная в них глубинная философия, где вардапет предстает как сын своей среды и страны, как добившийся мирового признания исключительный музыкант и высокообразованная личность с ее внутренними движениями и драматическими переживаниями.

Целью статьи является: а) рассмотреть многослойные письма Комитаса как исключительный инструмент раскрытия мировоззрения и внутреннего мира личности, б) осмыслить с точки зрения современного художественного сознания представленные в письмах ключевые послания, с) раскрыть процесс межкультурной коммуникации на примере писем Комитаса, выявив заложенные в них национальные и общечеловеческие идеи.

Задачами исследования являются: а) изучить и прокомментировать зашифрованные знаки, касающиеся совпадения общечеловеческих и национальных идей в письмах Комитаса, б) рассмотреть феномен самобытности армянской культуры и музыкального искусства в поле мировой культурологии.

Изучение материала проводилось с использованием сравнительно-исторического, описательного и аналитического методов.

На страницах писем тайна Комитаса полностью не раскрыта, однако можно сформулировать следующую истину: Комитас очистил, переложил на ноты и создал величавую родину нашей песни, безупречное и чистое существование которой, несомненно, является частью армянской истории и философии бытия.

Ключевые слова: *Комитас, собрание писем, раскрытие психологии и мысли, насыщенный мир эмоций, документ, данный свыше дар, мировое признание, живая энциклопедия армянской песни*

YEVA MNATSAKANYAN – Komitas in the Mirror of His Letters. – Composer, musicologist, musician and collector of folklore, teacher, founder of the Armenian composer school Soghomon Soghomonyan, i.e., Komitas, is one of the national symbols, whose fate is perceived as the fate of the Armenian people. Many studies are devoted to him, but the mysterious image of Komitas continues to be in the center of attention of the Armenian and foreign researchers.

The present article briefly analyzes the individual ideological and psychological aspects of Komitas's letters, presents the deep philosophy reflected in them, where the vardapet appears as a son of his environment and country, as an exceptional musician, who has achieved worldwide recognition, and a highly educated personality with his inner movements and dramatic experiences.

The purpose of the article is: a) to examine the multi-layered letters of Komitas as an exceptional tool for revealing the worldview and inner world of a person, b) to comprehend the key messages presented in the letters from the viewpoint of modern artistic consciousness, c) to reveal the process of intercultural communication on the example of Komitas's letters, revealing the national and universal ideas embedded in them.

The objectives of the study are the following: a) to study and comment on the encrypted signs concerning the coincidence of universal and national ideas in the letters of Komitas, b) to examine the phenomenon of the originality of the Armenian culture and musical art in the field of world cultural studies.

The study of the material was conducted with the use of comparative-historical, descriptive and analytical methods.

The pages of the letters do not fully reveal the secret of Komitas, but the following truth can be formulated: Komitas purified, transcribed to musical notes and created the majestic homeland of

our song, whose impeccable and pure existence is undoubtedly a part of the Armenian history and philosophy of being.

Key words: *Komitas, a collection of letters, a revelation of psychology and thought, a rich world of emotions, a document, a gift from above, worldwide recognition, a living encyclopedia of Armenian song*

References

- Amenayn hayoc yergi vehap'arry. Komitas vardapet, Er., Heghinakayin hrat., 2019
 Badikyan Kh., Komitase' inchpisin yeghel e, Er., Zangak hrat., 2013
 Brutyan Ts., Komitas, Er., Hayastan hrat., 1969
 Brutyan Ts., Komitas hayoc p'arose, Er., Hayastan hrat., 2009
 Gasparyan S., Komitas. kyank'ë, gorcut'yunë, steghsagorc'ut'yunë, Er., Haypethrat, 1961
 Komitas, Er., HSSH GA hrat., 1969
 Komitas, Yerkeri zhoghovadzu, h. 7, Er., «Anahit», 1997
 Komitas. Namakner, Er., GAT' hrat., 2007
 Komitas vardapet (1869-1935), Er., «Sargis Khachenc'», 2009
 Komitase zhamanakats'neri husherum yev vkayut'yunnerum, Er., «Sargis Khachenc'», 2009
 «Mshakoyt'», hm. 3-4, Pariz, 1935
 Charenc' E., Yerkeri zhoghovadzu, h. 3, Er., «Sovetakan grogh» hrat., 1987
 Sahakyan L., Ditarkumner Komitas vardapet yev Hay Arak'elakan yekeghets'i arnjut'yunneri shrj, Patmabanasirakan handes, hm. 3, Er., 2021
 Sevak P., Yerkeri zhoghovadzu, h. 5, Er., «Hayastan» hrat., 1974

NEOMYTH AND DECONSTRUCTION: THE COURTLY NARRATIVE AND ITS TRANSFORMATION IN JOHN UPDIKE'S «BRAZIL»

NATALIA GONCHAR-KHANJYAN* 
Yerevan State University

This article examines John Updike's «Brazil» (1994) as a postmodern transformation of the Tristan and Isolde myth within the framework of magical realism and postcolonial discourse. The study hypothesizes that Updike does not reproduce the canonical narrative, but deconstructs it, presenting courtly love as resistance to societal norms, racial hierarchy, and gender constraints. The aim is to analyze how the novel reconfigures key mythopoetic elements—archetypes, sacred objects, ritual, and liminal space—through narrative inversion and symbolic reinterpretation. Particular attention is given to onomastic symbolism, the theme of embodiment and initiation, and the replacement of medieval ethics with contemporary identity politics. The methodological approach combines hermeneutics, structuralism, and postcolonial theory, alongside tools from comparative mythology and literary semiotics. The article argues that «Brazil» functions as a neomyth – a syncretic philosophical parable where the miraculous emerges not from divine intervention but from the human capacity to transgress. In reimagining the legend through a poetic of hybridity and transformation, Updike's novel challenges traditional conceptions of love, fate, and the heroic, revealing how myth adapts to modern cultural and historical contexts.

Key words: *Updike, magical realism, Tristan and Isolde, postmodernism, ritual, myth*

Introduction

The legend of Tristan and Isolde, one of the central archetypes of European cultural memory, has undergone numerous transformations across centuries – from Celtic oral tradition to medieval courtly romance, from Romantic reinterpretations to postmodern deconstructions. Its adaptability is rooted in a mythopoetic structure that encodes core oppositions: love and law, passion and prohibition, nature and civilization. The legend's semantic flexibility enables its continual revival in varying ideological and aesthetic contexts.

* **Natalia Gonchar-Khanjyan** – Candidate of Philological Sciences, Associate Professor at the Chair of Foreign Literature YSU

Նատալիյա Գոնչար-Ֆանջյան – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ

Наталья Гончар-Ханджян – кандидат филологических наук, доцент кафедры зарубежной литературы ЕГУ

E-mail: natalie.goncharkhanjyan@ysu.am <https://orcid.org/0009-0002-5462-8509>



This work is licensed under a Creative Commons Attribution-Non-Commercial 4.0 International License.

Ստացվել է՝ 08.09.2025

Գրախոսվել է՝ 06.10.2025

Հաստատվել է՝ 06.11.2025

© The Author(s) 2025

John Updike's «Brazil» offers a radical reimagining of this myth, shifting it from the medieval world of chivalry and sacral order to the polyphonic and fragmented space of contemporary Brazil. Here, love is no longer framed by divine codes or feudal ethics, but by the fractures of postcolonial identity, social injustice, and racial hierarchies. The novel operates at the intersection of magical realism and postmodernist narrative strategy, constructing what may be termed a neomyth – a restructured symbolic system in which traditional archetypes are retained but reloaded with new cultural, racial, and gendered meanings.

This study proposes that «Brazil» does not merely allude to the courtly narrative but enacts a comprehensive deconstruction of its foundational logic. While retaining key motifs – initiation, exile, transgression, and tragic love–Updike recontextualizes them within a world governed not by metaphysical destiny but by social determinism and historical violence. The sword becomes a razor; the forest, a marginal zone of poverty; the love token, a stolen ring; and the metamorphosis of the lovers, a literal bodily transformation crossing racial boundaries.

The central aim of this article is to examine the mechanisms through which Updike rewrites the Tristan and Isolde myth as a reflection on the limits of identity and love in a post-traditional world. The hypothesis guiding this inquiry is that «Brazil» functions as a postmodern philosophical parable, where myth is no longer a sacred given but a site of struggle – between memory and erasure, archetype and stereotype, desire and ideology.

Methodologically, the article combines hermeneutic, structuralist, and postcolonial approaches, drawing from literary comparativism, myth criticism, and semiotics. The analysis focuses on symbolic materiality (sword, ring, body), narrative inversion, and the gendered agency of transformation. In doing so, it situates «Brazil» not only within the tradition of Arthurian reception but also within broader debates on the function of myth in late modernity.

Ultimately, this introduction frames «Brazil» as a case study in the contemporary survival of myth – no longer transcendent, but embedded in the contradictions of history and the flesh.

The Arthurian Myth as a Mythopoetic Structure: Symbolic and Narrative Evolution from Chronicle to Courtly Archetype

The myth of King Arthur emerges at the junction of oral tradition, monastic historiography, and symbolic power. In early sources like «*De Excidio Britanniae*», «*Historia Brittonum*» by Nennius, and the «*Annales Cambriae*», Arthur appears not as a king, but as a sacralized war leader. The latter text emphasizes the religious dimension: «appear in the statement relative to Arthur at the battle of Badon, that he carried the cross of Christ “in humeros suos”»¹. Geoffrey of Monmouth's «*Historia Regum Britanniae*» (XII century) shifts the figure into a national monarch, structuring the myth around magical birth, alliance with Merlin, battles with Saxons, betrayal by

¹ Annales Cambriae. (2008). Edited by John Williams. Longman, Green, Longman, and Roberts, p. 24. -231 p. [Electronic resource]. Available at: <https://archive.org/details/annalescambriae00willgoog> (Accessed: 15.07.2025).

Mordred, and departure to Avalon. The Glastonbury tomb discovery of 1191 reinforced the legend's sacral-political role in Plantagenet legitimation.

In the later Middle Ages, the Arthurian myth evolves into a synthesis of heroic, sacred, and courtly codes. Wace, Layamon, and Chrétien de Troyes expand the narrative with the Round Table, Excalibur, and knights like Launcelot and Galahad. Arthur transforms from conqueror into a moral mediator. This culminates in Malory's «*Le Morte d'Arthur*» (1470), a mythopoetic compilation shaped in prison, fusing epic, allegory, and Christian eschatology.

Malory's structure centers on four archetypes: sacred origin, power's legitimation (sword in the stone), betrayal (Launcelot and Guinevere), and sacred death (Avalon). Excalibur unites mystery and sacrifice, returning to its source. The Round Table symbolizes circular perfection; its twelve knights evoke apostolic and cosmological harmony. The Grail, its epicenter, remains inaccessible to the unworthy: «Then there entered into the hall the Holy Grail covered with white samite... every knight had such meats and drinks as he best loved in this world... the holy vessel departed suddenly <...> And then the king yielded thanking to God, oh his good grace that he had sent them»². The Grail nourishes the soul and acts as a spiritual catalyst.

Malory's Book V introduces Tristram of Lyonesse – not as a victim of fate, but as a figure torn between honor and love. His antagonist is King Mark, portrayed as politically weak yet dangerous. Tristram's quest for Isolde the Fair is framed by duels and betrayal, yet he survives. Malory eliminates the love potion, central in Bédier's version; here, love arises from compassion and loyalty. Even Tristram's marriage to Isolde of the White Hands becomes an attempt at ethical resolution. Nevertheless, chivalric ideals condemn him: even Launcelot calls him enemy. Tristram's arc – jealousy, madness, transformation – ends in moral solitude.

His duel with Launcelot becomes a moment of ethical recognition: «because Sir Launcelot abode and was the last in the field the prize was given him... Sir Tristram hath won the field, for he began first, and last he hath endured, and so he hath done the first day, the second, and the third day»³. In Joyous Gard, a utopian chivalric space, he finds harmony outside courtly intrigue. Malory redefines the woman not as temptation, but as ideal – a mirror of knightly identity. Malory thus constructs an ethical epic: his characters embody virtues – valor, loyalty, temperance – not as qualities, but as existential choices. The Arthurian world becomes a field of moral initiation.

The Tristan and Isolde myth, originating in Celtic oral tradition (skel, lais), was redefined through Anglo-Norman reception. Bédier links its transformation to Breton jongleurs, who helped shape the genre of chivalric romance. Bérout's fragmentary «*Tristan*» shifts responsibility onto the potion; Isolde's imperfect beauty breaks with the courtly ideal. Thomas of Britain deepens psychology and dialogue. These lay the groundwork for Gottfried's «*Tristan*» and the *madman* motif later reprised by Bédier.

² **Malory Tomas.** (1998). *Le Morte d'Arthur*. King Arthur and of his Noble Knights of the Round Table in Two Vols. Volume 2 [Electronic resource]. Available at:

<https://www.gutenberg.org/cache/epub/1252/pg1252-images.html> (Accessed: 15.07.2025).

³ *Ibid.* Volume 1 [Electronic resource]. Available at:

<https://www.gutenberg.org/cache/epub/1251/pg1251-images.html> (Accessed: 15.07.2025).

Adaptations reflect narrative flexibility: in the «*Saga of Tristram and Isolde*», his musical gifts are emphasized; Marie de France's «*Chevrefoil*» equates honeysuckle and hazel as inseparable lovers: «The hazel and the honeysuckle... if someone tries to separate them, each plant dies»⁴. English ballads polarize the two Isoldes, while Spanish versions add giants and interpret the potion as Christian absolution.

By the XVI century, Pierre Sala shifts focus to heroic deeds. Vinaver notes that the legend eventually merges into unrelated episodes: «Collection des aventures de Tristan et de Lancelot n'ayant aucun rapport avec les versions connues du roman»⁵. Romanticism revives the myth: Swinburne's «*Tristram of Lyonesse*» sees love as a cosmic force, while Wagner's «*Tristan und Isolde*» internalizes tragedy. Isolde becomes an active agent; death follows even after forgiveness.

In prose, Mann's «*Tristan*» parodies the myth in a sanatorium setting; Kaiser centers Mark, suggesting transparency kills passion. In «*Finnegans Wake*», identity disintegrates as Tristan and Mark merge. Sapkowski's «*Lamalladie*» ends with a postmodern gesture: Isolde remains only as a name, her voice recoded through Isolde of the White Hands.

Russian reception evolves from distant allusions to modernist and postmodernist transformations. From the «*Tale of Peter and Fevronia*» to post-Soviet reworkings (Nepodoba, Maksimenkova, Kochetkov), the myth becomes a reflective model of love, loss, and the metaphysical structure of desire.

The Semiotics of Number, Object, and Name in the Sacred Structure of Joseph Bédier's «Romance of Tristan and Isolde»

Bédier's adaptation («*Le Roman de Tristan et Iseult*», late XIX century) is unique in that it offers not merely a literary reconstruction of the legend, but a conceptually complete sacred structure, in which numerical, object-related, and onomastic symbolism function as deep codes of mythopoetic thought. From the very exposition, Tristan is framed as a «child of death»: «In sadness came I hither, in sadness did I bring forth, and in sadness has your first feast day gone. And as by sadness you came into the world, your name shall be called Tristan»⁶, – and this grief becomes the ontological vector of his existence. In Joseph Bédier's Romance of Tristan and Isolde, a system of numerical motifs serves a symbolic and compositional function. The number three recurs at key structural points, often marking turning events. Tristan lives with King Mark for three years before his lineage is revealed: «and for three years a mutual love grew up in their hearts» (1: 33). The tribute from Cornwall to Ireland follows a ternary pattern: «three hundred pounds of copper», «three hundred pounds of

⁴ **France Marie de.** (2013). *The Lays of Marie de France* / Translated by David R. Slavitt. – Edmonton: AU Press, Athabasca University. – 160 p. [Electronic resource]. Available at: https://www.aupress.ca/app/uploads/120228_99Z_Slavitt_2013-The_Lays_of_Marie_de_France.pdf (Accessed: 15.07.2025).

⁵ **Vinaver E.** (1925). *Etudes sur le Tristan en prose*. – Paris: Champion, p. 55 – 120 p.

⁶ **Bédier Joseph.** (191-?). *Le roman de Tristan et Iseut*. Paris: H. Piazza, p. 23 [Electronic resource]. Available at: <https://archive.org/details/leromandetristan00bduoft/page/22/mode/2up> (Accessed: 15.07.2025). Further references to this source are given in the text in parentheses as (1: page number).

silver», «three hundred pounds of gold», and finally, «three hundred youths and three hundred maidens drawn by lot from among the Cornish folk» (1: 37-38). The duel site is set «three days from Tintagel» (1: 40); Mark cries out «Tristan! Tristan! Tristan, my son!» (1: 161); reconciliation with the queen is announced for «three days» later (1: 169); and in Morois, «three days later, Tristan spent a long time tracking a wounded stag» (1: 153). This ternary repetition reflects not only narrative rhythm but also deeper symbolic meaning. In traditional and Christian symbolism, the triad represents wholeness and transformation, yet in the romance it also encodes tension: the love triangle–Tristan, Isolde, Mark–brings conflict rather than balance.

The number seven appears at decisive thresholds: Tristan is entrusted to Governal at age seven (1: 24); the sea voyage lasts «seven days and seven nights» (1: 47); and in his final battle, «he slew seven brothers, but was himself wounded by a spear» (1: 267). These uses signal stages of inner transformation and fateful transitions. Eight, often associated with eternity and cycles, frames Tristan's and Isolde's sea journeys: «eight days and eight nights» to King Mark and again to fetch Isolde (1: 272). This recurrence stresses the closed rhythm of desire, the idea of unchanging (predestined) Fate and the lovers' ultimate reunion in death as a form of paradise regained.

The number four marks both the beginning and end of Tristan's life. He is born on the fourth day after his father's death, and dies after calling Isolde's name three times: «and on the fourth, he breathes his last» (1: 281). Four warriors represent Morholt's strength (1: 39), and four barons – «Andret, Genelon, Gondoin, and Denoalen»–plot intrigue (1: 51), establishing four as a marker of earthly structure tied to conflict and mortality.

Finally, forty, rooted in Christian tradition, appears in pivotal healing and transitional episodes: Isolde heals Tristan over forty days (1: 48-49); King Mark postpones remarriage for forty days (1: 53); and Tristan sets «not later than forty days from now» as Kahedin's deadline (1: 271). These echo spiritual trial and renewal, linking the romance to broader religious and mythic frameworks. Thus, the system of numbers in Joseph Bédier's romance is far from arbitrary: it shapes the internal structure of the narrative, determines the rhythm and typology of events, and enriches the text with an additional layer of meaning, drawing upon religious, philosophical, and folkloric traditions. The recurring numerical formulas not only organize the narrative but also represent the protagonists' journey as a sacred process – one filled with trials, temptation, healing, and the passage toward eternity.

Symbolic materiality reinforces the structural code of the romance. The sword separating the lovers in sleep marks the threshold between sacred and profane: «Would they have placed this sword between themselves? ... the naked blade ... serves as a pledge and guardian of chastity» (1: 149–150). Similarly, the farewell scene (1: 168) becomes a ritual of sacralized love: the ring with green jasper, symbolizing eternity, and the dog Hudson, a token of loyalty, enact the transfer of essence: «Their value lay not in their utility or market worth, but in the fact that they, as it were, embodied and gave visible form to the relationships between the people who exchanged them»⁷.

At the narrative's close, myth returns to liturgy: Isolde «kissed him on the lips and on the forehead and gently lay beside him – body to body, mouth to mouth. Thus she

⁷ Гуревич А.Я. (1984). Категории Средневековой культуры. – М.: Искусство, с. 191. – 285 с.

gave up her soul, dying of grief for her beloved» (1: 282). The hawthorn, growing from Tristan and «arched over the chapel into Isolde's grave» (1: 283), unites them in death. This vegetal symbol recurs as a mythic threshold, both obstacle – the blazing hawthorn pyre (1: 131) – and union (1: 283), framing the lovers' journey beyond mortality.

The sail emerges as a false sign and a hermeneutic trap: «Twice in the romance the sail deceives expectation – the red on Marholt's ship and the black – the lie of Isolde of the White Hands»⁸. Here, tragedy stems not from fate, but from misreading, echoing the classical motif of Theseus.

Onomastics provides a final semantic closure: Tristan (from triste) – a name of mourning; Isolde – the one gazed upon, the sanctified object of eros; Mark (from mar, death) – a vector of decay. Thus, number, object, and name together form a mythopoetic system, in which love is inseparable from transgression, and tragedy unfolds as sacred fulfillment.

This material-symbolic and numerical matrix echoes through 20th-century adaptations, including John Updike's *Brazil*, where the lovers confront anew the archetypes of prohibition, initiation, and death, reinterpreted within postcolonial and magical realist paradigms.

Postmodern Strategy of Retransmission: The Destruction of Social Order and Mythopoetic Resonance in Updike's «Brazil»

John Updike's literary practice is marked by a consistent interest in archetypal models, reinterpreted through the lens of contemporary cultural concerns. As early as «The Centaur», mythological discourse is integrated into a realist narrative, and the characters acquire a dual ontology – as both real figures and mythological projections. The aesthetics of metamorphosis, the syncretism of classical and Christian codes, and the variability of perspective create a palimpsestic textual structure, in which the teacher Caldwell appears simultaneously as a martyr and as the centaur Chiron.

In «The Witches of Eastwick», Updike develops a strategy of mythological reprise through a gender-critical lens: witches – marginal figures in classical mythology – become bearers of power and transcendence. The town of Eastwick is transformed into a sacred topos of female strength, and magical realism serves as a vehicle for sociocultural revisionism. As Margaret Atwood observes, Updike constructs a model of mythopoetic matriarchy – a line that finds radical continuation in «Brazil». Updike's reconstruction of myth extends beyond individual plots, encompassing a broad corpus – from the Rabbit tetralogy to «The Poorhouse Fair» and «Of the Farm» – where themes of identity loss, the disintegration of authority, and the collapse of familial order are recurrent. These motifs form the foundation of «Brazil» as a neomyth that reinterprets the legend of Tristan and Isolde through postcolonial and postmodern lenses.

John Updike's «Brazil» (1994), one of his later works, presents a syncretic narrative in which the canonical legend of Tristan and Isolde undergoes a radical postmodern transformation. The text functions as a mytho-epic reprise, embedding the classical love story within the sociocultural polyphony of twentieth-century Brazilian reality. Through the lens of postcolonial and racial discourse, Updike reconstructs universal

⁸ **Малиновская Н.** (2014). Тема с вариациями. –М.: Центр книги Рудомино, с. 51. – 528 с.

archetypes, reactivating them within the coordinates of contemporary oppositions: «white–black», «wealth–poverty», «civilization–primitivism», «life–death». The very exposition of the novel, which opens with the word «black», establishes the semantic dominant of the text: binarity becomes the structural foundation of the narrative and a metaphor for cultural confrontation.

Updike explicitly cites Joseph Bédier's «Romance of Tristan and Isolde» as a source of compositional inspiration; however, his interpretation functions as a hermeneutic displacement rather than a direct adaptation. The heroine's name – Isabel – traces back to Isolde but acquires solar symbolism: her fair skin, blond hair, and association with the sun transform her into a mediator of mythopoetic light and erotic awakening. The sea, alongside the sun, serves as a sacred element: it frames the novel's ring structure, linking the scene of the lovers' first encounter with Tristan's death, thereby reproducing the archetype of fate. Yet Updike's ending travesties the canonical version, deflating the romantic perception of the story: «She lay down beside him and kissed his eyes, his lips... But the rising sun continued to redden her shut lids, and the chemicals within her continued their fathomless commerce, and the crowd grew bored. There would be no miracle today... Having absorbed this desolating truth, the dark-eyed widow staggered to her feet, tightened her robe about her nakedness, and let her uncle lead her home»⁹.

Key courtly attributes are reinterpreted: the sword is replaced by a razor – a mundane object imbued with the symbolism of masculinity and power. In the scene of intimacy, it takes the place of the sword from the forest of Morois, alluding to the classical motif but in a different register. Updike performs a deconstruction of the chivalric myth, preserving its iconography while radically altering its semantic charge.

In Updike's postmodern representation, the figures of Tristan and Isolde retain the key motifs of the canonical chronicle – the ritual of initiation, flight, exile, concealment in a symbolic forest, return, and the tragic impossibility of existence within the confines of society. However, their semantic charge undergoes a radical shift. Thus, the giving of a ring – a symbolic token of love and betrothal, familiar from the versions by Bédier and Gottfried von Strassburg – is preserved in «Brazil», yet stripped of its courtly purity: on the beach, Tristan offers Isabel a copper ring engraved with the word *DAR*, and the act is tinged with transgression, a gesture outside the law, as the ring is stolen, «a ring yanked from the finger of an elderly tourist gringa» (2: 3).

The rite of initiation, which in the medieval tradition is enacted through Tristan's death and miraculous healing, is reinterpreted in «Brazil» through an erotic experience initiated by the woman. It is Isabel who becomes the agent of action, disrupting the gender hierarchy of the original: unlike Isolde, she does not merely save the hero but guides, activates, and possesses him. This shift is emphasized both through linguistic markers and through her interaction with the sacred: the shaman calls Isabel a «warrior» (2: 210) and equates her with a prophet. In this way, the traditional animus–anima structure is destabilized: the feminine assumes the functions of the masculine, enacting the Jungian principle of synthesis in a postmodern key.

⁹ **Updike John.** (1994). «Brazil». Ballantine Books, p. 290–291 [Electronic resource]. Available at: <https://archive.org/details/»Brazil»noveljohnu0000unse/page/290/mode/2up> (Accessed: 15.07.2025). Further references to this source are given in the text in parentheses as (2: page number).

The protagonists' narrative journey in «Brazil» serves as a reprise of the knight-and-lady quest known from the Tristan and Isolde chronicle, but it is imbued with the colors of racial and social antagonism. In «Brazil», the obstacle is not only the familial code but also skin color, class affiliation, and institutional power. The figure of Isabel's father, Salomão, symbolizes not merely paternal prohibition but also the politico-administrative hierarchy – a structural analogue to royal authority. His speech is imbued with the rhetoric of exclusion: he explicitly tells his daughter, «You will not throw away your life on a black slum boy» (2: 80), thereby transforming the courtly trial into an ethnic conflict.

The spatial model in «Brazil» reproduces the mythologeme of the «forest refuge»: Ursula's hut – an analogue to the forest of Morois – functions as a zone of otherness and a temporary space of freedom from society: «his tense grip tugged her down, into a narrow space where the bare clay was overlaid with scratchy lumps, rough bags stuffed, from their faint fragrance, with what might have been dried flowers, or the skeletons of very small and delicate dead creatures. Stretching out her own delicate bones, thinking herself as safe from pursuit now as a body in its tomb, she whimpered in an approach to pleasure» (2: 33). This space of corporeal and natural union preserves its archetypal structure but is reinterpreted through the lenses of gender, ethnicity, and power. Thus, «Brazil» emerges as a reversal of the courtly narrative, transformed into artistic hermeneutics of contemporaneity.

The plot paradigm of «Brazil» continues the reconstruction of the Tristan and Isolde myth, incorporating the essential motif of separation followed by sacred reunion. As in the canonical legend, Updike's protagonists are parted for two years: Isabel spends this time at university and in casual relationships, while Tristão undergoes physical decline, condemned to an inner death. Updike metaphorically interprets Tristão's physical deterioration as the loss of his soul: «She was his eternal life» (2: 96), thereby activating the traditional dualism of man as body and woman as soul. This coupling of the corporeal and the spiritual, the sexual and the eschatological, finds its roots in the chronicles of the thirteenth century, where the death of one protagonist inevitably entails the death of the other – as an ontological response to the rupture of an indivisible unity.

The financial motivation in «Brazil» introduces a modernist element, aligning the novel with the tradition of the XVIII century. As in Abbé Prévost's «Manon Lescaut», love is intertwined with material dependence: like Des Grieux, Tristão makes compromises for the sake of his beloved, who is driven by a desire for comfort. The similarity of the overarching narrative discourse gives the novel a hybrid character, in which the courtly myth is interwoven with a critique of economic determinism, revealing the postmodern hero's duality – suspended between archetype and social reality.

The escalating destruction of the environment in «Brazil» takes on a spatial metaphor: the deeper Tristão and Isabel move inland, the more acutely they feel distanced not only from civilization but from the chronological present – «Moving inland, they seemed to move backwards in time» (2, 125). Updike constructs a chronotope of a vanishing world, where the return to archaism is not an aesthetic gesture but a mode of reality. The four-year isolation at the gold mine becomes a form of initiation outside society: Tristão experiences physical depletion, while Isabel

assumes the role of provider, including bodily sacrifice. This inverted archetypal scenario deconstructs traditional gender roles and calls into question heroism as an exclusively masculine discourse.

The death of Cesar at Tristão's hands and the lovers' flight into the wilderness (another point of contact with Prévost's novel) continue the motif of escape from «the system» which Isabel explicitly names as the true adversary: «“It is not my father that hunts us”, she said defensively. “It is the system”» (2: 169). This statement shifts the focus from a personal conflict to institutional violence, drawing a parallel between the chivalric hierarchy that obstructed love in the courtly myth and the modern social barriers – racial and class-based. Thus, «Brazil» is not merely an allusion to Tristan and Isolde, but a pointed social diagnosis of the postcolonial capitalist era.

The episode of the shamanic ritual marks a pivotal moment in the mythopoeitics of «Brazil»: the lovers exchange bodies, and as a result, Tristão becomes white, while Isabel becomes Black. This bodily metamorphosis encompasses racial, gender, and social identities, dissolving traditional oppositions. The rite of initiation is enacted not through weaponry or a male figure, but within the sacred space of a ritual initiated by a woman. Isabel assumes the role of the hero, acting as the agent of salvation and transformation. The courtly structure is not abolished but reconfigured: love becomes an act of will and a form of resistance against fixed social and cultural roles. The ending of «Brazil» rejects the myth of return: although the protagonists formally reintegrate into the system, true assimilation never occurs. Despite the change in skin color and social status, Tristão remains symbolically other and experiences existential estrangement. Isabel, though having lost her physical identity, retains an inner connection to her racial and cultural belonging: «Eyes are the window of the spirit. When your soul becomes black, then will your eyes also» (2: 213), where the «black soul» functions as a marker of the «white» society. Their union is possible only outside the normative world – beyond law, time, and lineage. It is a myth of love without progeny, love as a transgression of order, destined from the outset to vanish. The final scene on the shore is a mirror image of the lovers' first meeting, as in Bédier's version or the anonymous texts of the «Roman de Tristan». The hero dies where love once began: the mythological circle is completed. His death is an act of class violence, marking the collapse of the utopia of reconciliation. Peace remains unattainable, even after completing all stages of the journey – a quality that links «Brazil» to Georg Kaiser's tragedy «The Cuckold King», where the legitimization of desire leads not to union, but to the loss of longing. In his novel, Updike realizes the deep structure of the courtly myth, interpreting it through the prism of postmodernism and social critique.

The novel reconfigures key motifs of the medieval narrative, reinterpreting the names of the protagonists as markers of archetype; the sun and the sea – as cosmogonic principles; the sword and the ring – as sacred objects; the ritual of initiation – as bodily transformation; and the prohibition of love and the motif of wandering – as necessary phases within the mythological cycle. Particular significance is also attached to the absence of offspring as a structural element within the mythological paradigm of forbidden love. This system of motifs, rooted in Celtic origins, proves productive in the context of twentieth-century modern «Brazil», where myth and history converge, and love emerges simultaneously as a form of resistance and a form of impossibility.

«Brazil» operates within the paradigm of magical realism, where the mythological, the sensual, and the historical coexist in an ontologically unstable reality. The protagonists' journey from Rio into the interior is not merely a change of landscape but a passage into a liminal space in which the civilizational yields to the archaic and the ritualistic. From the very exposition, the forest is portrayed as a symbol of the dissolution of the familiar order: «The old forest, it is coming back, it will eat all the poor» (2: 45). This remark establishes a magical realist perspective, in which space is endowed with metaphysical properties. The descent into an unencoded territory is accompanied by the loss of temporal and spatial coordinates: «They seemed under their loads to be moving backward in time, away from the furies that excessive population had brought to their century, into a chaste space where pairs of willing human hands would still be valuable» (2: 166-167), marking a transition into a post-civilizational realm governed by different – shamanic – laws.

It is within this space that magic manifests through objects and actions: the ring functions as a sacred marker of connection; the razor, named «Brilliant», serves as a functional analogue to the sword and simultaneously as a totem, an amulet that protects its bearer. Forgotten at the climactic moment, it ceases to fulfill its protective role, and the hero, having lost the magical object, perishes. The razor thus acts as a fetish in the Lévi-Straussian sense: it is both an artifact and a conduit of the sacred. This transfer of function from the sword to a mundane object is a characteristic device of magical realism, one that blurs the boundary between the elevated and the vernacular, the sacred and the profane. In the figure of Tristão – a Black protagonist who evokes African archetypes – Updike introduces the presence of the Other, a mediator between worlds, whose departure from the social structure cannot occur without sacrifice.

The figure of Isabel in «Brazil» combines features of the courtly romance heroine and a character from magical realism. Her appearance – golden hair, radiant skin likened to the sun or ivory – synthesizes the images of Isolde the Fair and Isolde of the White Hands, forming the archetype of the woman of light. From their very first encounter, Tristão registers the ambivalence of her image: «An angel or a whore?» (2: 8). The shaman sees her as Mayra – a messianic figure, the embodiment of solar energy: «Your skin is no longer magic» (2: 214). Within the poetics of magical realism, Isabel appears as a mediator between worlds; her corporeal ephemerality and detachment correspond to the concept of the «ghostly hero» (the definition by N. V. Kuznetsova, the author of a study devoted to mythologism in Updike's novels). She becomes not only a reinterpreted Isolde, but also a symbol of sacred otherness, expressed through body, color, and perception. The culmination of the mythopoetic transformation in «Brazil» is the scene of the shamanic ritual, in which a skin exchange occurs between Tristão and Isabel. This bodily metamorphosis embodies the shamanic idea of the changeability of the outer shell and the conditionality of boundaries between worlds. The ritual space – the summit of the Mesa – symbolizes the passage into the transcendent. The ring inscribed with «DAR» becomes the price for the transformation, a token of love offered as a ritual sacrifice. The ritual is accompanied by a psychoactive experience that facilitates the establishment of rapport between Isabel and the Tupinambá shaman: «When the shaman at last did speak, she miraculously understood; certain of his mumbled words stood out like highlights, glimmering with meaning, and the sense of the sentence slitheringly moved through

under the dark spaces between. Something in the smoke had eaten away at the boundary between their minds» (2: 207).

The process lasts seven days – a number traditionally associated with feminine and cosmogonic cycles. Isabel's transformation reflects not only a physical change but also a shift from sacred status to human vulnerability. Updike inscribes «Brazil» into the tradition of literary metamorphoses (Ovid, Apuleius, Stevenson, Kafka, Bulgakov), bringing the novel closer to Andersen's «The Little Mermaid»: the heroine voluntarily leaves her world for the sake of love, losing her magical gifts (her voice – in Andersen, the radiance of her skin – in Isabel) and passing through the figure of a mediator (a witch / a shaman). Both characters are marked by angelic otherness – white skin, transparency, gray-blue eyes. Their journey involves the loss of former identity and existence at the boundary between worlds.

Updike interprets the archetype of transformation through a feminist and postcolonial lens: the woman is not the object of the rite but its initiator. Isabel's return to her father's house completes the cycle: he instantly recognizes her – «To a father, a daughter is always perfection» (2: 255). This episode illustrates a core principle of magical realism – the integration of the supernatural into the fabric of the everyday.

In «Brazil», the miraculous does not oppose reality but reveals its deeper structure. Ritual, the sacralization of objects (the ring, the razor, the body), and the shift in chronology shape an ontology in which magic is not an anomaly but a mode of being. Updike's novel emerges as a philosophical parable about love, identity, and the boundaries of belonging, narrated in the language of myth and magical thinking.

Conclusion

The present study has examined John Updike's novel «Brazil» in its intertextual relationship with the courtly narrative of Tristan and Isolde. By tracing the mythopoetic structure of the Arthurian cycle – from the chronicles of Gildas and Nennius to the synthetic canon of Thomas Malory – we have explored how the medieval model of love, honor, initiation, and sacred space undergoes transformation in contemporary literature.

Updike preserves the fundamental structural elements of the courtly myth – flight, concealment, the rite of initiation, the extralegal love union, and the tragic outcome – but redistributes their semantic weight. The Arthurian narrative, in which the sword, the ring, the sacred forest, and the name carried sacral meaning and defined an ethical trajectory, is reinserted by Updike into a new framework – postcolonial, postmodern, and gender-critical. Within this system, the archetype no longer functions as a universal ideal but rather as a fraught cultural code subject to revision.

The comparison between the courtly original and its modern counterpart in «Brazil» reveals significant transformations: the knightly sword is replaced by a razor – a symbol of masculinity and a domestic weapon; the ring loses its ritual purity and becomes a gesture of alienated love; the rite of initiation is enacted through the body, suffering, and a symbolic shift in race. These displacements demonstrate that the myth of Tristan and Isolde in Updike's novel is not negated but reinterpreted – as a cultural mechanism of resistance to system, authority, and normative order.

The mythological model in «Brazil» unfolds within the poetics of magical realism, where the boundaries between reality and the miraculous are blurred. The protagonists

do not merely reenact the fate of their medieval predecessors but travesty it under conditions of profound social and ontological instability. Their love is not a gift but a choice – not fate, but defiance. This new mythopoetics reveals the nature of love as transgression and gives rise to a distinctive narrative form: the neomyth, which fuses archetype with trauma, structure with social critique.

Thus, the objectives of the study – identifying the mechanisms of deconstructing the courtly narrative, analyzing the transformations of archetypes, symbols, and gender roles, and reflecting on the functions of myth within the context of magical realism – have been fulfilled through comparative analysis. Updike's «Brazil» emerges not merely as a literary echo of the legend, but as a profound artistic reflection on the limits of identity and the possibilities of love in a post-traditional world. In this reading, the Arthurian myth reveals its resilience: though it loses its sacred integrity, it retains the capacity to generate meaning – within a different cultural body and with new ideological functions.

ՆԱՏԱԼԻՅԱ ԳՈՆՉԱՐ-ԽԱՆԶՅԱՆ – Նեոմիֆ և ապամոնտաժում. կուլտուրալ նարատիվը և դրա վերափոխումը Ջոն Ափդայքի «Բրազիլիա» վեպում – Ջոն Ափդայքի «Բրազիլիա» (1994) վեպը դիտարկվում է որպես պոստմոդեռնիստական կերպարափոխում Տրիստանի և Իզոլդայի մասին առասպելի՝ մոգական ռեալիզմի և հետգաղութային դիսկուրսի տեսանկյունից: Հիպոթեզն այն է, որ Ափդայքը ոչ թե վերարտադրում է ավանդական նարատիվը, այլ ապամոնտաժում է այն՝ փոխակերպելով կուլտուրալ սիրո մոտիվը հասարակական նորմերին, ռասայական և գենդերային հիերարխիային ընդդիմանալու ձևաչափի: Հոդվածի նպատակը վերլուծելն է՝ ինչպես է վեպում վերաշերտավորվում առասպելի միֆոպոետիկ կառուցվածքը արքետիպերի, սրբազան առարկաների, ծիսակարգի և սահմանագծային տարածքի վերափմաստավորման միջոցով: Հատուկ ուշադրություն է դարձվում անունների խորհրդանշաբանությանը, մարմնավորման և նախաձեռնումի մոտիվներին, ինչպես նաև միջնադարյան բարոյագիտության փոխարինմանը ինքնության ժամանակակից խնդիրներով: Մեթոդաբանությունը ներառում է հերմենևտիկ, կառուցվածքաբան և հետգաղութային մոտեցումներ՝ միֆաբանական և գրական սեմիոտիկայի գործիքակազմի համադրումով: Աշխատանքը հանգում է այն եզրակացության, որ «Բրազիլիան» հանդես է գալիս որպես նեոմիֆ՝ փիլիսոփայական առակ այն սահմանների մասին, որտեղ մարդկայինը միաձուլվում է հրաշքին: Ափդայքն իր հիբրիդային և փոխակերպվող պոետիկայով վերափմաստավորում է սերը, ճակատագիրը և հերոսությունը՝ ցույց տալով, թե ինչպես է առասպելը վերափոխվում ժամանակակից մշակութային և պատմական համատեքստում:

Բանալի բաներ – Ափդայք, մոգական ռեալիզմ, Տրիստան և Իզոլդա, պոստմոդեռնիզմ, ծես, առասպել

НАТАЛИЯ ГОНЧАР-ХАНДЖЯН – Неомиф и деконструкция: куртуазный нарратив и его трансформация в «Бразилии» Джона Апдайка. – В статье рассматривается роман Джона Апдайка «Бразилия» (1994) как постмодернистская трансформация мифа о Тристане и Изольде в контексте магического реализма и постколониального дискурса. Выдвигается гипотеза о том, что Апдайк не воспроизводит канонический сюжет, а деконструирует его, превращая куртуазную любовь в форму сопротивления социальным

нормам, расовой и гендерной иерархии. Цель исследования – проанализировать, как в романе переосмысляются мифопоэтические элементы: архетипы, сакральные объекты, ритуал и пограничное пространство. Особое внимание уделяется ономастической символике, мотивам воплощения и инициации, а также замещению средневековой этики проблематикой идентичности. Методологическая основа включает герменевтический, структуралистский и постколониальный подходы в сочетании с элементами сравнительной мифокритики и литературной семиотики. Статья показывает, что «Бразилия» выступает как неомиф – философская притча о границах человеческого и чудесного, где мифологическое рождается не из сверхъестественного, а из способности героя к трансгрессии. Через поэтику гибридности и превращения Апдайк заново формулирует ключевые категории любви, судьбы и героизма, демонстрируя, как миф адаптируется к реалиям современной культуры.

Ключевые слова: *Апдайк, магический реализм, Тристан и Изольда, постмодернизм, ритуал, миф.*

References

- Annales Cambriae. Edited by John Williams. (2008). Longman, Green, Longman, and Roberts. – 231 p. [Electronic resource]. Available at: <https://archive.org/details/annalescambriae00willgoog>
- Bédier Joseph. (191-?). Le roman de Tristan et Iseut. Paris: H. Piazza. [Electronic resource]. Available at: <https://archive.org/details/leromandetristan00bduoft/page/22/mode/2up>
- France Marie de. (2013). The Lays of Marie de France / Translated by David R. Slavitt. – Edmonton: AU Press, Athabasca University. – 160 p. [Electronic resource]. Available at: https://www.aupress.ca/app/uploads/120228_99Z_Slavitt_2013_The_Lays_of_Marie_de_France.pdf
- Gurevich A.Ya. (1984). Kategorii Srednevekovoi kultury. M.: Iskusstvo. – 258 s. (in Russian).
- Malinovskaya Natalya. (2014). Tema s variatsiyami. M.: Tsentr knigi Rudomino. – 528 s.: ill (in Russian).
- Malory Tomas. (1998). Le Morte d'Arthur. King Arthur and of his Noble Knights of the Round Table in Two Vols. Volume 1. [Electronic resource]. Available at: <https://www.gutenberg.org/cache/epub/1251/pg1251-images.html>
- Malory Tomas. (1998). Le Morte d'Arthur. King Arthur and of his Noble Knights of the Round Table in Two Vols. Volume 2. [Electronic resource]. Available at: <https://www.gutenberg.org/cache/epub/1252/pg1252-images.html>
- Updike John. (1994). Brazil. Ballantine Books. [Electronic resource]. Available at: <https://archive.org/details/»Brazil»noveljohnu0000unse/page/290/mode/2up>
- Vinaver E. (1925). Etudes sur le Tristan en prose. Paris: Champion. – 120 p.

ԼԵԶՎԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐ. ՀԱՂՈՐԴՈՂ ԵՎ ՆԵՐԳՈՐԾՈՂ ԼԵԶՎԱՏԱՐԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԶՀՄ ԼԵԶՎՈՒՄ

ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ^{ID}
Երևանի պետական համալսարան

Ժամանակի ընթացքում զանգվածային հաղորդակցման միջոցների լեզուն վերափոխվում է՝ արձագանքելով տեղեկատվության տարածման արագությանը, ազդեցության միջոցների բազմազանությանը և լսարանի պահանջների փոփոխությանը: Այդ փոփոխությունների պայմաններում առանձնահատուկ կարևորություն է ստանում լեզվական կաղապարների (շտամպների, խոսքային բանաձևերի, կրկնվող կառուցվածքային միավորների) գործածությունը, որոնք ապահովում են թե՛ հաղորդակցության հստակությունն ու մատչելիությունը, թե՛ ազդեցիկության բարձր մակարդակը:

ԶՀՄ լեզուն՝ որպես հանրային խոսույթի կարևոր տարր, միաժամանակ պարունակում է ինչպես հաղորդող (ինֆորմատիվ), այնպես էլ ներգործող (ապելյատիվ, պերսուազիվ) տարրեր: Դրանց համատեղ գործածությունը դրսևորվում է հատկապես կաղապարների մեջ՝ ձևավորելով արժեքային, գնահատողական և գաղափարական հարանշանակությամբ (կոնոտացիաներով) հագեցած միավորներ, որոնք ակտիվորեն օգտագործվում են լրագրողական տարբեր ժանրերում:

Մեր այս հոդվածում ներկայացվում են կաղապարների՝ որպես կառուցվածքային և գաղափարական միջոցների գործառական հնարավորությունները հայաստանյան զանգվածային հաղորդակցության տարբեր միջոցներում, դրանց հաղորդակցական նշանակությունը տարբեր ժանրերում, վերլուծվում և նկարագրվում են հաղորդող և ներգործող բաղադրիչների համատեղ գործածությունն ու փոխազդեցությունը՝ որպես ԶՀՄ լեզվի առանցքային հատկանիշ:

Բանալի բառեր – *լեզվական կաղապար, ընդհանուր լեզվակաղապար, մեղիալեզվակաղապար, խոսքային բանաձևեր, արտալեզվական գործոններ, լեզվական-մտային գործոններ, հաղորդող և ներգործող լեզվատարրեր, խորհրդային շրջան, հետխորհրդային շրջան, գործառման ոլորտ, գործառույթներ*

Յուրի Ավետիսյան – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ

Юрий Аветисян – доктор филологических наук, профессор, заведующий кафедрой армянского языка ЕГУ

Yuri Avetisyan – Sc. D. in Philology, Professor, Head of YSU Chair of Armenian Language

Էլ. փոստ՝ yuriavetisyan@ysu.am <https://orcid.org/0009-0004-7475-8161>



This work is licensed under a Creative Commons Attribution-Non-Commercial 4.0 International License.

Ստացվել է՝ 30.09.2025

Գրախոսվել է՝ 23.10.2025

Հաստատվել է՝ 06.11.2025

© The Author(s) 2025

Լեզվական կադապար: Հարցի առաջին ուսումնասիրողներից Գ. Վինոկուրը առաջ քաշեց այն տեսակետը, որ կադապարայնությունը լրագրային լեզվի անհրաժեշտ և անբաժանելի հատկանիշն է¹: Հետագա ուսումնասիրողները (Վ. Կոստոմարով, Գ. Մոլգանիկ, Դ. Ռոզենտայլ, մեզանում՝ Ռ. Շալունց և ուրիշներ) հանգեցին այն եզրակացության, որ «ստանդարտը» և տեղին գործածված «շաբլոնը» ոչ միայն լրագրային լեզվի, այլև առհասարակ ՁԼՄ լեզվին բնորոշ գիծ է²: Եղան նաև հակառակ տեսակետի կողմնակիցներ, որոնց կարծիքով շտամպը և ստանդարտը որակվեցին **կադապարաբանություններ**, որոնք իբրև թե գորշություն ու միապաղաղություն են հաղորդում լեզվին: Չէր խրախուսվում դրանց գործածությունը՝ «Չի կարելի հանդուրժել շաբլոնն ու տրաֆարետը մամուլում» կարգախոսով: Այս տեսակետի կողմնակիցները կա՛մ որպես ելակետ և համեմատության եզր ընդունում էին գեղարվեստական տեքստը՝ ռուս դասականների գեղարվեստական ոճը (Ա. Գորբունով և այլք), կա՛մ իրենց գնահատականներում հստակ չէին տարբերակում անհրաժեշտ կադապարը և անհարկի շտամպը (Ա. Սկվորցով, Հ. Բադդասարյան, Մ. Ավագյան և այլք)³: Մակայն այս տեսակետը ունեցավ շատ մասնակի դրսևորումներ: Դրանց հաղորդակցական արդյունավետության վերաբերյալ վեճերը արդի մասնագիտական գրականության մեջ կարծես մարել են, և առաջ է մղվում այն կարծիքը, որ լեզվական կադապարը ՁԼՄ լեզվական կառուցվածքի անբաժանելի բաղադրիչ է:

Շտամպ, ստանդարտ, շաբլոն, կլիշե, տրաֆարետ, ստերեոտիպ և նման այլ տերմինները հայ մեդիալեզվաբանության մեջ հաճախ քննարկվել են առանց իմաստային էական զանազանություն արձանագրելու: Չեն զատվել իրարից մի կողմից՝ սովորական կայուն բառակապակցությունները, մյուս կողմից՝ լրագրային ստանդարտը և դրա անհաջող կիրառությունները, մերժելի կլիշեներ կամ շտամպը:

¹ Տե՛ս **Винокур А.**, Культура языка. М., 1929, էջ 213:

² Տե՛ս **Շալունց Ռ.**, Մամուլի և հրապարակախոսության լեզուն, Եր., 1987, էջ 24-33, 114-115:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 17-19, 114-115:

* Ժամանակակից հետազոտողի կարծիքով՝ ճշգրիտ լինելու համար նպատակահարմար է **ՁԼՄ** տերմինի (զանգվածային լրատվության միջոցներ) կապակցական **լրատվություն** բաղադրիչը փոխարինել **հաղորդակցություն** տերմինով (**ՁԼՄ**—զանգվածային հաղորդակցության միջոցներ): Հարցադրումը պայմանավորված է զանգվածային լրատվամիջոցների բովանդակային ու կառուցվածքային, ինչպես նաև գործառության և այլ կարգի մի շարք փոփոխություններով (լսարանի ակտիվ ներգրավվածություն, սոցիալական ներգործություն, փոխադարձ մեկնաբանություններ են), որոնք արտացոլված են զանգվածային հաղորդակցության միջոցներում (տե՛ս **Клушина Н.** Стиль массовой коммуникации, М., 2010; **Колесникова О.** Язык и стиль современных средств массовой коммуникации, Киров, 2020): **ՁԼՄ** հասկացությունը ներառում է տպագիր մամուլը, լրատվության էլեկտրոնային միջոցները (ռադիոհեռուստատեսություն, էլեկտրոնային մամուլ, տեղեկատվական գործակալություններ), սոցցանցային հաղորդակցության միջոցները (Telegram, Facebook, Twitter, Instagram ևն):

Երբ փորձում ենք ճշգրտել գործածվող տերմինների իմաստային հատկանիշներն ու ծագումնաբանական հիմքերը, պարզվում է, որ դրանք կա՛մ այլևայլ իմաստներով (հիմնականում փոխաբերական) հոմանշային միավորներ են, կա՛մ իմաստային սերտ առնչություն ունեցող հասկացություններ: Այսպես: **Շաբլոն**. փոխառություն է ռուսերենից՝ ֆրանսերեն-գերմաներեն միջնորդությամբ՝ գերմ.՝ **Schablone** (<ֆր.՝ **e'chantillon**-ից, նշանակում է *փորձարկում, նմուշ*): Ըստ հայերեն բացատրական բառարանների՝ «1. Ձևով՝ չափսով նն միատեսակ արտադրանքի նմուշ՝ ձևանմուշ: 2. Գործիք...: 3. փխբ. Սովորական դարձած կարգ՝ օրինակ նն, որին կուրորեն հետևում են» [ԱՀԲԲ]: Այլ բացատրությամբ՝ «Մտքերն արտահայտելու շատ սովորական՝ միօրինակ ձև՝ արտահայտություն» [ԺՀԼԲԲ], «2. Տափակ, սովորական, անարժեք: Շաբլոն՝ մտքեր՝ խօսքեր» [ՀԲԲ]: **Տոսամյալ** – գերմ.՝ **Stampfe** բառից (<**stampo** – իտալերեն՝ *կնիք, դրոշմ*): Ըստ հայերեն բացատրական բառարանների՝ «1. Գործիք...: 2. Հիմնարկի անունը կրող կնիք...: 3. փխբ. Պատրաստի օրինակ, տրաֆարետ, որին կուրորեն հետևում՝ նմանվում են» [ԺՀԼԲԲ]: **Ստանդարտ** – անգլ.՝ **standart** – կայուն լինել: «1. Որևէ բանի նմուշ, օրինակ...: 3. փխբ. Շարունակ կրկնվող միօրինակություն, անփոփոխ՝ մաշված ու միօրինակ բան, շաբլոն, տրաֆարետ: Դե դրանք ստանդարտ խոսքեր են...» [ԱՀԲԲ]: **Կլիշե** – ֆր.՝ **cliché** (փխբ. անընդհատ կրկնված՝ շաբլոնային դարձած արտահայտություն): «2. փխբ. Անընդհատ կրկնված՝ շաբլոնային դարձած բան: Սրանք կլիշե դարձած խոսքեր են...» [ԱՀԲԲ]: **Կադապար** – հունարեն՝ «ոտքի փայտեայ կադապար» բառից, կրկնակ ձևը՝ **գադափար** [ՀԱԲ]: Ըստ բառարանային տվյալների՝ ունի իննից տասը իմաստ՝ «1. Նմուշ, որից հանում են ձև՝ մի այլ նյութով ձուլելու կամ վերարտադրելու համար...» նն: Ութերորդ՝ փոխաբերական նշանակությամբ գործածվում է որպես գիտաբան՝ «Ընդունված սովորական կամ կանոնական դարձած օրինակ՝ ձև՝ նմուշ, որին կուրորեն հետևում են»⁴:

Ակնհայտ է, որ այս բոլոր տերմինները լեզվաբանական նշանակությամբ, որը հիմնված է դրանց առավելապես երկրորդական-փոխաբերական իմաստների վրա, արտահայտում են հասկացական նույն բովանդակությունը: Հետևաբար տերմինի ընտրությունը ըստ էության ունի պայմանական նշանակություն, քանի որ դրանք ազատ բաշխման հարաբերության մեջ գտնվող տարբերակներ են:

Մեզանում հարցին ամենից հանգամանորեն անդրադարձել է լեզվաբան Ռ. Շալունցը: Ցավոք, ուսումնասիրողը հստակ ու միանշանակ չի սահմանում այդ տերմինների նշանակությունը և չի ճշգրտում դրանց գործածության

⁴ Որպես տերմին՝ գործածվում է նաև կառուցվածքային լեզվաբանության մեջ, բայց ավելի նեղ՝ զուտ լեզվաբանական նշանակությամբ՝ «ԿԱՂԱՊԱՆ/модель, լեզվի կառուցվածքային միավոր տիպ, իբրև բաղադրիչ տարրերի հետևողական շարք դրանց կանոնավորված փոխկապակցությամբ (փոխհարաբերությամբ)» [Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Եր., 1987]:

շրջանակները: Բայց լեզվաբանի բնութագրումներից կարելի է ենթադրել, որ նա ի վերջո հակված է երևույթը անվանող տերմիններից առանձնացնելու երկուսը՝ **ստանդարտ**-ը և **շտամպ**-ը, առաջինը՝ որպես լրագրային լեզվին բնորոշ և դրական նշանակությամբ հասկացություն, երկրորդը՝ դրա՝ ըստ գործածության հանձնարարելի կամ ոչ հանձնարարելի տարբերակ: Յու. Դավթյանը նախընտրությունը տվել է **լրագրային շտամպ** և **խոսքային կաղապարներ** տերմինային կապակցություններին: Բայց լեզվաբանը, դրանք համարելով «լեզվական պատրաստի միավորներ, որոնք ակտիվորեն մասնակցում են մտքերի ձևավորմանը», այնուամենայնիվ չի կատարում դասակարգում և բավարարվում է «կաղապարների» չորս խումբ օրինակներ թվարկելով⁵:

Մենք նախապատվությունը տվել ենք **կաղապար** տերմինին, նախ՝ որ իր հասկացական նշանակությամբ («ընդունված՝ սովորական կամ կանոնական դարձած օրինակ՝ ձև՝ նմուշ, որին հետևում են») ավելի մոտ է քննարկվող լեզվական իրողությանը, այսինքն՝ տերմինի բովանդակությունը համապատասխանում է հասկացությանը, և երկրորդ՝ իբրև հնագույն փոխառություն՝ այն ավելի է ձուլված հայերենի բառային կազմին և իր հնչյունական նկարագրով ավելի ներդաշնակ է հայերենի արտասանական համակարգին, քան մյուս փոխառյալ և օտարաբան տերմինները: Տերմինային նշանակությամբ գործածելիս զանց ենք առնում բառի բացատրության մեջ ակնարկվող *«կուրորեն» հետևելու, ընդօրինակելու, նմանվելու* բացասական երանգ ունեցող իմաստները, քանի որ այս ոլորտում դրանց գործածությունը օբյեկտիվորեն չի բնութագրվում նման հատկանիշներով (այդ մասին՝ ստորև):

Վ. Կոստոմարովը լրագրային լեզվում գործադրվող «լեզվական ստանդարտները» քննելիս հանգում է եզրակացության, ըստ որի՝ լրագրային լեզվում գործադրվող «ստանդարտը» իր մեջ առնում է երկու կարգի, այսպես կոչված, ենթաստանդարտներ՝ **«ընդհանուր ստանդարտներ»** և **«լրագրային ստանդարտներ»**: Առաջինները, ըստ այդ տեսության, վերաբերում են նաև լեզվի գործառնական մյուս ոլորտներին (իրավագիտություն, տնտեսագիտություն ևն) և ըստ էության այդ ոլորտներից են մուտք գործում լրատվամիջոցներ, երկրորդները լրագրային լեզվին հատուկ ստանդարտներ են, գործառնական են այս ոլորտում: Այդ տեսակները փոխներթափանցումների մեջ են, մասնավորապես՝ առաջինները աղբյուր են երկրորդների ձևավորման համար⁶:

Ելնելով մեր ուսումնասիրության արդյունքներից՝ փոքր-ինչ զարգացնելով այս մոտեցումը՝ հայերեն ՁՀՄ լեզվում գործառնական կայուն բառակապակցությունների և խոսքային պատրաստի բանաձևերի վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալ «սխեման»:

⁵ Տե՛ս Դավթյան Յու., Արևելահայ մամուլի լեզուն հետխորհրդային շրջանում, Եր., 2006, էջ 212-213:

⁶ Տե՛ս Костомаров В. Г., Русский язык на газетной полосе, М., 1971, էջ 10:

Քննարկվող լեզվական կառույցներն ու միավորները առաջարկում ենք անվանել **լեզվական կաղապարներ**, որոնք իրենց հերթին ունեն երկու կարգի դրսևորումներ՝ **ընդհանուր լեզվակաղապարներ (համալեզվական կաղապարներ)** և **մեղիալեզվակաղապարներ: Առաջինները** կայուն արտահայտություններ են, որոնց բաղադրիչները հաճախակի համատեղ գործածվելու հետևանքով ձեռք են բերել սերտ հարաբերակցություն: Օգտագործվում են առօրյա խոսքում կամ, այսպես կոչված, ոլորտային տեքստերում: Հաճախ ձևավորվում են դարձվածային համակարգում կամ մշակութային հենքի վրա: Զանգվածային հաղորդակցության միջոցներում չունեն կոնկրետ գործառույթ: **Երկրորդները** ՁՀՄ-ին հատուկ կաղապարներ են, ձևավորվում են հաղորդակցական անհրաժեշտություններից ելնելով, կատարում են առավելապես լրատվական գործառույթ, ինչը նվազեցնում է նրանց ներազդման դերը:

Համալեզվական կաղապարները առավելապես բնորոշ են վերլուծական նյութերին և ունեն թեմատիկ մեծ բազմազանություն: Կարող են վերաբերել՝ ♦ տնտեսությանը (տնտեսական մրցակցություն, տնտեսական ակտիվության աճ, ներդրումների համար բարենպաստ պայմաններ, տնտեսությունը շարունակում է կայուն աճ գրանցել), ♦ հասարակական-քաղաքական կյանքին (քաղաքական ճգնաժամ, էթնիկ գոտում), ♦ միջազգային դիվանագիտական հարաբերություններին (միջուկային նոր սպառնալիք, դիտորդական առաքելություն, Միսսիլի խմբի համանախագահներ, Քիվեսթյան համաձայնագիր), ♦ ռազմաքաղաքական իրավիճակին (ռազմական հատուկ գործողություններ, սահմանազատման և սահմանագծման հանձնաժողով, հայելային հետքաշում, ռազմաքաղաքական վերնախավ, ռազմական նոր էսկալացիա), ♦ կուսակցական գործունեությանը (ՀՀԴ գրասենյակ, ՔՊ խմբակցություն, ներկուսակցական խնդիրներ), ♦ կրթական համակարգին (ակադեմիական քաղաք, կրթական նոր չափորոշիչներ), ♦ արդարադատությանը և առհասարակ իրավական ոլորտին (սահմանադրական նորմ, մարդու իրավունքներ, դատական համակարգ), ♦ տեղեկատվական տեխնոլոգիաներին (սոցիալական ցանց, համակարգչային կայք, էլեկտրոնային հասցե) նն: Սրանց գործածությունը, կարելի է ասել, հավասարապես բնորոշ է նաև ոլորտային լեզուներին՝ իրավաբանական, տնտեսագիտական, դիվանագիտական, ակադեմիական գրագրություն, քաղաքագիտական գրականություն, կրթական-մշակութային փաստաթղթեր, օրենքներ ու չափորոշիչներ նն:

Այս նյութերի հեղինակը կարող է լինել նաև տվյալ ոլորտի մասնագետը՝ իրավաբանը, տնտեսագետը, բժիշկը, արվեստագետը նն: Այսինքն՝ այդպիսի կայուն կապակցությունները բուն ՁՀՄ լեզվի բառային կազմի բաղադրիչ չեն: Բնորոշում են այդ լեզուն այնքանով, որքանով հրապարակվում կամ քննարկվում են հաղորդակցության միջոցներում: Պայմանավորված թեմատիկայով կամ նյութի ժանրային հատկանիշներով՝ գործածվում են նաև հաղորդակցության միջոցների լեզվում: Այստեղ դրանք առավելապես կոչված են ոճավո-

րելու համապատասխան մասնագիտական տեքստը: Իրականացնում են շատ որոշակի գործառույթներ. պաշտոնական ոճում նպաստում են խոսքի կառուցիկ լինելուն, հստակություն և ամբողջականություն են հաղորդում պաշտոնական տեքստին: Նաև որոշ վստահություն են ներշնչում տեքստի ավանդականության, անփոփոխելիության հիմքով: Ապահովում են նաև խոսքի պաշտոնականությունն ու հանդիսավորությունը: Գիտական խոսքում նպաստում են տեղեկատվության արագ հաղորդմանը և ընկալմանը: Օգնում են հեղինակին համառոտ և սեղմ բնութագրելու երևույթը:

Մեդիալեզվակաղապարը բառակապակցական կայուն միավոր է՝ դարձյալ բաղադրիչների իմաստային-կառուցվածքային սերտաձուլմամբ: Ընդունված է դրանք առավելապես վերագրել ՁՀՄ լեզվին: Ի տարբերություն նախորդի՝ գործածվում է գերազանցապես տեղեկատվական տեքստերում և բացառապես լրագրողների կողմից: Ունի հաղորդող ներգործության ավելի մեծ ուժ, քան նկարագրական խոսքը: Տեքստը կառուցվում է սեղմ, հակիրճ. տեղեկույթը ձևակերպվում է արագ, փոխանցվում է արագ, արագ ընկալվում է լսարանի կողմից: Ե՛վ հեղինակը, և՛ օգտատերը էապես խնայում են էներգիա ու ժամանակ: Նաև հնարավորություն են ունենում նույն կաղապարներով արձագանքելու և հաղորդակցվելու իրար հետ: Պատահական չէ, որ մեդիակաղապարը ավելի հաճախ գործածվում է տեղեկատվական ժանրերում: Մա ի վերջո լեզվական կաղապար է, որի մեջ հեղինակը տեղադրում է իր բուն ասելիքը: Առանց պատրաստի լեզվական կաղապարների՝ անհնար է արագ և գրագետ պատրաստել տեղեկատվություն և, ընդհանրապես, հաղորդատվական նյութեր:

Լեզվակաղապարների հաճախակի գործածությունը պայմանավորված է արտալեզվական և լեզվական մի շարք գործոններով:

Արտալեզվական գործոններ. հասարակական կյանքի աննախադեպ զարգացումը և փոփոխությունները ստիպում են արագ և կարճ արձագանքելու իրադարձություններին: Խոսքային բանաձևերով կաղապարայնացվում է տեղեկատվության ուժեղ հոսքը:

Լեզվական-մտային գործոններ. լրագրողը քիչ ջանքեր է գործադրում ձևակերպումների համար, օգտվելով արդեն պատրաստի խոսքային կառույցներից՝ տնտեսում է մտքի էներգիան: Կաղապարը հաղորդում է նաև որոշակի արտահայտչականություն. խոսքը դառնում է ավելի դյուրընկալ, մատչելի և սահուն:

Շատ հիմնավոր է ռուս հետազոտողի բնորոշումը ՁՀՄ լեզվում կաղապարների ձևավորման պատճառների և դրանց գործառական նշանակության վերաբերյալ. «Լրագրությունը՝ որպես արտադրություն, հոսքագիծ է: Լրագրությունը՝ որպես ծառայությունների ոլորտ, նույնպես տեքստերի հոսքագծային (հոսքային) փոխանցում է լսարանին: Մի խոսքով, զանգվածային արտադրություն՝ զանգվածային պահանջարկի համար: Եթե ամեն անգամ ինչ-

որ օրիգինալ բան ստեղծվի, ապա առաջին հերթին՝ ժամանակը բավարար չի լինի (մյուսներն առաջ կանցնեն, թերթի համարը կգնա տպարան, եթերի ժամանակը բաց կթողնվի), երկրորդ՝ հանդիսատեսը չի արձագանքի նորությամբ: Տեղեկատվության հոսքի մեջ լսարանը պետք է լավ կողմնորոշվի, այլ ոչ թե լուծի բառախաղեր և ջանքեր գործադրի՝ հասնելու համար ավանգարդորեն կառուցված տեքստի իմաստին: – Այս նպատակի գործնական իրացումը (պրագմատիկան) առաջացնում է լրագրողական նյութերի ձևերի տնտեսում և ստանդարտացում»⁷:

Կադապարները լեզվական կայուն միավորներ են: Բայց դա հարաբերական է. նոր ժամանակները ծնում են նոր կադապարներ:

Փոփոխության են ենթարկվում ինչպես համալեզվակադապարները, այնպես էլ մեդիալեզվակադապարները: Առաջինների փոփոխությունը գերազանցապես պայմանավորված է արտալեզվական գործոններով՝ հասարակական-քաղաքական կյանքի փոփոխություններ, տնտեսության շրջադարձային զարգացումներ, ռազմաքաղաքական իրավիճակ, միջազգային հարաբերություններ են: Համեմատության համար բերենք խորհրդային և հետխորհրդային ժամանակներին բնորոշ գործառնական ընդամենը մեկ-երկու ոլորտի վերաբերող լեզվական կադապարներ: Այսպես:

Ռազմական կյանք.

խորհրդային շրջան՝ *միջուկային թնավոր հրթիռ, ռազմաօդային կցորդ, զինվորական թղթակից, միլիտարիզմի ուժեր, հրթիռամիջուկային զենք, իմպերիալիզմի ագրեսիա, մարտական անխախտ դաշինք, սովետական փառապանծ զինված ուժեր, իմպերիալիզմի սպասավորներ, ՄՍՀՄ զինված ուժեր, խաղաղության դեկլարացիա:*

հետխորհրդային շրջան՝ *սահմանագծման հանձնաժողով, ԱԹՄ-ների հարձակման ենթարկվել, օդատիեզերական ուժեր, զորքերի հայելային հետքաշում, նոյեմբերի 9-ի եռակողմ համաձայնագիր, ռուսական խաղաղապահ ուժեր, ռազմական հատուկ գործողություններ, անվտանգության գոտի, խաղաղության օրակարգ, խաղաղության խաչմերուկ, ԵՄ դիտորդական առաքելություն, հայ-ադրբեջանական սահմանի տարբեր հատվածներ:*

Աշխատանքային գործունեություն, տնտեսական հարաբերություններ.

խորհրդային շրջան՝ *աշխատանքային հերթափոխ, եղբայրական ժողովուրդների անխախտ բարեկամություն, հարվածային ճակատ, սոցիալիստական մրցույթ, փոխանցիկ դրոշմ հաղթողներին, պլանների կատարում և գերակատարում, հարվածային հերթափոխ, հնգամյակի հարվածային տարի, աշխատանքի վետերան, փոխանցիկ դրոշմ, կոլտնտեսային շուկա:*

հետխորհրդային շրջան՝ *նոր բիզնես ծրագիր, անժամկետ վարկեր, եկամտահարկի վերադարձ, վարկային կենսագրություն, պաշտոնական Երևանը*

⁷ Третьяков В., Как стать знаменитим журналистом, М., 2004, с. 263.

վստահեցնում է, անհատույց օգտագործում, Կենտրոնական բանկ, տնտեսավարող ուժեր, BRICS-ի անդամ երկրներ, ավելացված արժեքի հարկ:

Հասարակական-քաղաքական կյանք՝ գաղափարախոսական կաղապարներ.

խորհրդային շրջան՝ խաղաղ համագործակցություն, աշխատավոր ժողովրդի հաղթանակ, սոցիալիստական հարաբերություններ, աշխատավոր դասակարգ, ՄՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի անդամ, Գերագույն խորհուրդ, կենտկոմի քարտուղար, մարքս-լենինյան գաղափարախոսություն, իմպերիալիստական ագրեսիա, սոցիալիստական հայրենիք, խաղաղության և սոցիալիզմի ճամբար, հնգամյակը չորս տարում, փոխանցիկ դրոշ, շրջկոմի նախագահ, սոցիալիստական համակեցության կանոններ:

հետխորհրդային շրջան՝ քաղաքական կուսակցություններ, ազդեցության գործակալներ, ընդդիմության վարքագիծ, ընդդիմադիր ֆրակցիա, արտասահմանյան ֆինանսավորմամբ գործակալներ, բաց հասարակություն, Ազգային ժողով, վարչապետի աշխատակազմ, համայնքի ղեկավար, անվտանգության խորհրդի քարտուղար, քաղաքացիական հասարակություն, ԿԳՄՄ նախարար:

Տարբերություններն ակնառու են: Իհարկե, առանձին կաղապարներ անխուսափելիորեն գործածվել են երկու շրջափուլերում էլ: Դրանք ավելի շատ ընդհանրական նշանակությամբ միավորներ են, ինչպես՝ *իրականացնել վերահսկողություն, սերտ համագործակցություն, հասարակական հարաբերություններ, սպառազինությունների մրցավազք, ամենօրյա աշխատանք տանել, ակտիվորեն մասնակցել, սառը պատերազմ, բարձր արդյունավետություն, միջազգային կյանք, կարճ լուրեր, անվտանգության երաշխիքներ* են: Եվ դա բնական է, քանի որ հասարակական կարգի նույնիսկ արմատական, շրջադարձային փոփոխության դեպքում էլ հանրային կյանքի և մանավանդ արտաքին աշխարհի հետ կապված շատ ու շատ կողմեր ու հարաբերություններ մնում են գրեթե անփոփոխ, հետևապես անփոփոխ են մնում նաև դրանց լեզվական արտահայտության միջոցները:

Կառուցվածքային և բովանդակային զգալի փոփոխություններ են կրել հետխորհրդային շրջանի ՁՀՄ լեզվակաղապարները՝ պայմանավորված մեդիադաշտի գործառական և կառուցվածքային փոփոխություններով: Նախկին լրատվամիջոցների լեզվական կաղապարների («Մեր արտահաստիքային թղթակիցները հաղորդում են», «Մասսայական ինֆորմացիայի և պրոպագանդայի միջոցներ», «Ինչպես հաղորդում է ՏԱՄՍ-ը», «Ինչպես մեզ տեղեկացրին համապատասխան մարմիններից») փոխարեն՝ հետխորհրդային շրջանի մեդիամիջոցները կազմել և շրջանառության մեջ են դրել նոր կաղապարներ («Ըստ մեր ունեցած հավաստի տեղեկությունների», «Ըստ մեր աղբյուրների», «Մեր աղբյուրները հայտնում են», «Ըստ որոշ լուրերի», «Հավաստի աղբյուրներից հայտնի է դարձել», «Ինչպես մեզ հայտնեց ԱԳՆ խոսնակը»):

Էլեկտրոնային և սոցցանցային միջոցներում սովորական են ավելի խոսակցական կառույցներն ու կաղապարները՝ «Ըստ օրում կախված (հավաստի) լուրերի», «Ինքնությունը չբացահայտած աղբյուրը հայտնում է», «Այս մասին լրագրողների հետ զրույցում ասել է....», «Նյութն ամբողջությամբ կարդացեք բնօրինակ կայքում», «Ավելի վաղ հայտնել էինք, որ....», «Ինչպես ավելի վաղ գրել էինք....», «Տեսանյութը և լուսանկարները՝ ստորև», «Տեսանյութն ու լուսանկարները՝ ըստ ...-ի», «Տարածելը խրախուսվում է», «Մանրամասները՝ քիչ անց»։ Դրանք հաճախ ամբողջական նախադասություններ են, մի տեսակ տեղեկատվական լեզվակաղապարներ, որ մեկ-երկու բառի փոփոխությամբ կարելի է տեղադրել նույնաբնույթ նյութերում, ինչպես՝ «Առաջին նախագահի մամուլի խոսնակի փոխանցմամբ՝ շուրջ երկու ժամ տևած զրույցի ընթացքում հանգամանորեն քննարկվել են հայ-իրանական բարեկամության ամրապնդման, տնտեսական և մշակութային հարաբերությունների խորացման, ինչպես նաև տարածաշրջանային անվտանգության և հաղորդակցության ճանապարհների անխափան գործունեության ապահովման ու զարգացման խնդիրները» (news.am, 16.01.2024). սա կաղապար է, որ աննշան փոփոխություններով կարելի է «մշտապես» գործածել։

Լեզվակաղապարը դարձել է մեդիախոսույթի անբաժանելի մաս։ Այստեղ կաղապարը նույնքան մեծ անհրաժեշտություն է, որքան արտահայտչամիջոցը։

Կայուն բառակապակցությունների և լեզվական կաղապարների միջև մի տեսակ միջանկյալ դիրք են գրավում պատրաստի **խոսքային բանաձևերը**։ Դրանք նույնպես մեծ չափով հեշտացնում են հաղորդակցման գործընթացը։ Այլ հեղինակներ դրանց անվանում են **շտամպ**։ Կոչում են նաև **խոսքային կաղապարներ**։ Բառեր և բառակապակցություններ են, որոնք, ի տարբերություն նախորդների, պակաս զգայուն են հասարակական-քաղաքական և այլ կարգի փոփոխությունների հանդեպ։ Կատարում են սոսկ կապակցական դեր. ունեն առավելապես տեքստակազմական նշանակություն. կապում են խոսքային միավորներ՝ նախադասություն, պարբերություն։ Հատուկ են գործառական բոլոր ոճերին՝ բացառությամբ գեղարվեստականի, որը հասկանալի պատճառներով չի ընդունում կաղապարներ։ Այսպես՝

գիտական ոճ՝ *հիմնավորված տեսակետ է, պետք է նկատել նաև, պակաս կարևոր չէ նաև հետևյալ փաստարկը, չենք բացառում, ուշագրավն այն է, գիտական գրականության մեջ ընդունված է համարել, ստացված արդյունքները վկայում են, մեզ ավելի համոզիչ է թվում, եղած փաստերին կարելի է ավելացնել, մեր դիտարկումներով, ըստ մեր հետազոտության արդյունքների;*

խոսակցական ոճ՝ *իմ խորին համոզմամբ, չմոռանալ նշել, ուշադրություն դարձրեք, տպավորություն ունեմ, հավատացած եմ, լսիր քեզ ինչ եմ ասում, չի բացառվում, նայեք ինչ եմ ասում, չեմ կասկածում, պարզ երևում է, ես էմ*

կարծիքին եմ, դու լավ գիտես, ասեմ նաև, մի բան էլ ասեմ, ճիշտն ասած, ուշադիր լսիր՝ ինչ եմ ասում:

պաշտոնական ոճ՝ հարկ ենք համարում հիշեցնել, հիմք ընդունելով, համաձայն հաստատված կարգի, կից ներկայացնում ենք, կողմերը պարտավորվում են, պահանջ է դրվել, իրավունք է տալիս ասելու, տպավորությունն այնպիսին է, հարկ եղած ճշտումները կատարելուց հետո, մեզ հաջողվեց պարզել, համատեղ որոշումներ:

Իհարկե, դրանցում կարելի է առանձնացնել օրինակներ, որոնք առավել հատուկ են ոճերից մեկին կամ մյուսին. հստակ սահման դժվար է գծել, և դրա անհրաժեշտությունն էլ ըստ էության չկա: Ներթափանցումները բնական են: Ժամանակ առ ժամանակ փոխվում է նաև դրանց գործածության հաճախականությունը, որը մի առանձին քննության առարկա է: Պարզապես պետք է արձանագրել, որ խոսքային կաղապարները անփոխարինելի տարրեր են տեքստակազմության մեջ: Առանց դրանց՝ պարզապես չի կարող կառուցվել խոսքը, դա լինի պաշտոնական, գիտական թե՛ հրապարակախոսական: Միայն պետք է հիշել, որ ցանկացած բառ կամ բառակապակցություն, միևնույն համատեքստում հաճախակի կրկնվելով, կարող է վերածվել անհարկի շտամպի:

Լեզվական կաղապարը մեղիախոսության կարևոր և անփոխարինելի բաղադրիչ է:

Կաղապարի կամ խոսքային բանաձևի անհարկի գործածությունը կամ կուտակումը էապես թուլացնում է խոսքի ուժը, դարձնում այն միօրինակ ու անհրապույր, ինչպես հետևյալ դեպքերում՝ «Վեցերորդ ~~ասվածին~~ **հարկ է ապեցնել...** Թեև ընդհանուր առմամբ ~~կարելի է ասել~~, որ մեր երկրում կայացած ամեն ...» (1in.am; 05.07.2012), «~~Նկատի ունենալով այն հանգամանքը~~, որ համառորեն շրջանառության մեջ է պահվում ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ...» (facebook; 22.12.2020), «Այս պահին հիմնականում մեքենաները անցնում են Լարսի անցակետով, ~~պետք է նշել~~, որ խնդիրները առաջացել են ուժեղացված վերահսկողության կամ հսկողության» (tert.am; 12.06.2023), «~~Բնականաբար~~ **ստույգ** են, պանյուրքիզմը պոզով-պոչով չի լինում: Միջանցքը առևտրի համար չէ, **միջանցքը** (>դա) Թուրքիայի հնարավորությունն է իրականացնելու...» (azg.am; 09.03.2024): «Մենք, ~~կարելի է ասել~~, հասել ենք մեր նպատակներին...» (1in.am; 28.10.2024), «~~Ենթադրյալ~~ **հարկ է նշել**, որ Ռոբերտ Նալբանդյանն ունի երեք անչափահաս երեխա, իսկ աղբրեջանական գերության ընթացքում ծեծի հետեւանքով ստացել է կողոսկրերի կոտրվածք» (Yerkir.am; 29.12. 2021), «~~Եվ եթե մենք նայենք պարոն Փաշինյանի քաղաքականությանը~~, ապա կտեսնենք, որ նա բավականին հետևողականորեն հայկական քաղաքականության մեջ **նա հետևողականորեն** փորձում է Ռուսաստանին փոխարինել ԵՄ-ով» (7or.am; 13.07.2025):

Հաղորդող և ներգործող լեզվատարրերի համատեղ գործածություն: Լեզվական կադապարները, ինչպես տեսանք, մեղիատեքստում կատարում են առավելապես տեղեկատվական գործառույթ, այնպես, ինչպես լրատվական բառապաշարը: Դրանք մասնագիտական գրականության մեջ ընդունված է անվանել հաղորդող լեզվատարրեր: Մեղիալեզուն առատորեն օգտվում է այդ լեզվատարրերի տեղեկատվական հնարավորություններից: Սակայն այդքանով չի սահմանափակվում: Դրանք հաճախ զուգակցվում են գնահատողական-արտահայտչական միջոցների՝ ներգործող տարրերի հետ: ԶՀՄ լեզուն յուրահատուկ է ոչ միայն մյուս բոլոր ոճերին բնորոշ կադապարների առավել կամ պակաս գործադրությամբ, այլև նրանով, որ հաջողությամբ համատեղում է կադապարը և արտահայտչամիջոցը:

Հաղորդող և ներգործող տարրերի համատեղ գործածությունը ԶՀՄ լեզվի առանցքային հատկանիշներից է:

Եթե ավանդական դասակարգումներում դրանք դիտվում են որպես գործառական առանձին շերտեր, ապա մեղիատեքստում այդ տարրերը համակցվում են՝ ստեղծելով միաժամանակ և՛ տեղեկատվություն փոխանցող, և՛ ընթերցողին կամ դիտողին ուղղորդող հաղորդագրություն: Հաղորդող լեզվատարրերը ապահովում են փաստերի, իրադարձությունների ներկայացում, ներգործողները ուղղված են ընթերցողի զգայարաններին, վերաբերմունքին, մտածողությանը, կամքի վրա ազդելուն: Դրանք հաճախ համադրվում են՝ ստեղծելով քողարկված քարոզչական, կողմնորոշող կամ հուզական ազդեցությամբ բովանդակություն: Այդպիսին կարող է լինել, օրինակ,

